26 ՄԱՅԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 95(4714)

Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Ղարաբաղը, Ցեղասպանությունն ու ներկայիս Հայաստանը՝ վավերագրական ֆիլմում

Հունիսի 3-ից 4-ը անգլիալեզու «Russia Today» հեռուստաալիքով եթեր կհեռարձակվի «Հայաստանը ԽՍՀՄ փլուզումից 20 տարի անց» ֆիլմը, որի ուշադրության կենտրոնում Հայաստանի Հանրապետության նորագույն պատմությունն է:

Ըստ Ռուսաստանում Հայաստանի դեսպանության մամուլի ծառայության, ֆիլմը սկսվում է 1988 թ. Սպիտակի երկրաշարժի դեպքերով, ներկայացվում են ղարաբաղյան հակամարտության դրդապատճառները ու բանակցային գործընթացի ներկայիս փուլը:

Վավերագրական ֆիլմը պատմում է նաեւ 1915թ. Հայոց ցեղասպանության փաստի եւ հետեւանքների մասին: Ֆիլմում ներկայացվում են նաեւ Հայաստանի ձեռքբերումները քաղաքական եւ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: **Ա. Հ.**

# Համաներման նախագիծը քննարկվեց, քվեարկությունն՝ այսօր

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Ազգային ժողովում երեկ քննարկվեց Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձի առթիվ «Համաներում հայտարարելու մասին» նախագահ Սարգսյանի առաջարկը: Ըստ արդարադատության նախարար, Հայաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ **Հրայր Թովմասյանի**, համաներմամբ պատժի կրումից լրիվ կազատվի 396, մասամբ՝ 379 դատապարտյալ: 195 դատապարտյալ էլ կարող է լրիվ ազատվել, եթե փոխհատուցի տուժողին հասցված վնասը, նույն կերպ վարվելու դեպքում պատժի կրումից մասամբ կազատվի 195 դատապարտյալ: Հրայր Թովմասյանն ուղիղ պատասխան չտվեց, թե արդյո՞ք 2008 թվականի մարտի 1-ի դեպքերին առնչվող բոլոր դատապարտյալների վրա կտարածվի համաներումը. 396 հոգի ազատ է արձակվելու, մի քանի հաշվարկ անելով՝ դրա պատասխանը կարելի է ստանալ: Նախաքննական գործընթացում գտնվողների վրա, որոնք հանցագործություն են կատարել մինչեւ մայիսի 1-ը, համաներումը նույնպես կտարածվի:

Հրայր Թովմասյանը երեւի ինքն էլ չնկատեց, որ նախագիծը ներկայացնող իր ելույթի սկիզբը քաղաքական երանգներ ունի: Նա ասում էր, թե ժամանակն է ըմբռնելու, որ Հայաստանում ոչ թե իրարամերժ հանրություններ են ապրում, այլ մեկ ընդհանուր ազգ. «Ես կուզեի, որ հանրապետության նախագահի առաջարկած համաներումը դիտարկենք ոչ միայն բարի կամքի դրսեւորում, այլեւ որպես պատասխանատվության ընկալման հավաստում, որպես ներքին կյանքում արմատական փոփոխություն իրականացնելու կամք», ասաց նա՝ հավելելով, թե հարկադրված ենք մեր հանրային կյանքը փոխել, եւ միմյանց ոչնչացնելը պետք է դադարի նպատակ լինելուց: Մի փոքր մանրամասն ներկայացնենք այն շրջանակը, ում վրա տարածվելու է համաներումը:

*Տես էջ 2*

**ԱՅՍՕՐ**

# G8-ի շրջանակներում՝ ԼՂՀ հարցով նոր եռակողմ՝ Մեդվեդեւ-Սարկոզի-Օբամա հայտարարություն

**Դովիլում այսօր մեկնարկող «Մեծ ութնյակի» (G8) գագաթաժողովի շրջանակներում նախատեսվում է ընդունել ղարաբաղյան խնդրի առնչությամբ եռակողմ հայտարարություն՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների ստորագրությամբ: «ՌԻԱ նովոստի» գործակալության փոխանցմամբ՝ այդ մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահի օգնական Սերգեյ Պրիխոդկոն:**

**Արդեն երրորդ տարին անընդմեջ, փաստորեն, «Մեծ ութնյակի» հավաքները առիթ են դառնում նախագահների մակարդակով հայտարարությունների ընդունման համար: Հիշեցնենք, որ առաջին այդօրինակ եռակողմը ընդունվեց Իտալիայում 2009-ին, հաջորդը՝ Կանադայում 2010-ին:**

**Այս ամենով հանդերձ, բավականին հետաքրքրական է ժամանակահատվածի ընտրությունը, քանի որ ԱՄՆ-Ռուսաստան-Ֆրանսիա համանախագահող երկրների նախագահների մակարդակով այս հայտարարությանը պետք է արդեն հունիսին հետեւեն հանդիպումներ նախ Հայաստանի եւ Ադրբեջանի նախարարների մակարդակով, ապա նաեւ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ձեւաչափով, որոնց նախորդելու է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելությունը տարածաշրջան:**

**Իսկ տեղեկությունը, որ հրապարակել է Ադրբեջանում Իրանի դեսպան Մուհամմեդբաղիր Բահրամին, թե Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները հրավիրված են Թեհրանում կայանալիք ահաբեկչության դեմ պայքարի մասին կոնֆերանսին, դժվար թե Հայաստան-Ադրբեջան հանդիպման առիթ ծառայի, անգամ եթե երկու նախագահներն էլ որոշեն մասնակցել այդ կոնֆերանսին:**

**Միեւնույն ժամանակ, դատելով վերջին երեք տարում ղարաբաղյան հարցի բանակցային գործընթացի ու շփման գծում իրավիճակի տվյալներից եւ տեղեկություններից, հստակ է, որ անգամ նախագահական եռակողմ մակարդակի հայտարարություններ կարող են ստորագրվել, բայց լինել անարդյունք, քանի որ այդ հայտարարությունների եւ ընդհանրապես ստորագրվող փաստաթղթերի իրագործման մեխանիզմները չեն պարունակում նվազագույն երաշխիքներ:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Ինչի համար են լացում կամ ծիծաղում Ադրբեջանում

**Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, պատասխանելով ՀՀԿ-ական պատգամավոր Գագիկ Մելիքյանի՝ ազատագրված տարածքներից ԼՂՀ ստորաբաժանումները դուրս բերելու վերաբերյալ ադրբեջանական կողմից շրջանառվող լուրերի վերաբերյալ հարցին, այդպիսի լուրերը ծիծաղելի համարեց: Նա նշեց, որ Ադրբեջանը պետք է համակերպվի այն մտքին, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշի ԼՂՀ ժողովուրդը՝ իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտությամբ, հենց դրան են վերաբերում բանակցությունները, Ադրբեջանի ղեկավարությունն էլ իր հանրային կարծիքը դրան պետք է պատրաստի. «Իսկ թե ինչի՞ համար են լացում կամ ծիծաղում Ադրբեջանում... Չեմ կարծում, թե նույնպես ծիծաղելի կարող են լինել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, միջնորդ եռանախագահող երկրների կամ Եվրոմիության ղեկավարների համար. իրենց կողմից հնչեցված առաջարկները, հայտարարությունները՝ ռազմատենչ հռետորաբանության եւ կեցվածքի, հրադադարի ամրապնդման եւ դիպուկահարներին դուրս բերելու մասին Ադրբեջանում ոչ միայն արհամարհվում, այլեւ ծաղրանքի են ենթարկվում», նկատեց Հայաստանի արտգործնախարարը: Մ. Խ.**

# Ստեփանակերտի օդանավակայանը կաշխատի, երբ ապահովվեն անվտանգության անհրաժեշտ պայմանները

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 20-րդ նիստի շրջանակներում մայիսի 24-ին Արցախ էր ժամանել հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչներից եւ հոգաբարձուների խորհրդի անդամներից բաղկացած պատվիրակությունը՝ գործադիր վարչության տնօրենի գլխավորությամբ:

Առաջին հանդիպումը տեղի է ունեցել ԼՂՀ վարչապետ **Արա Հարությունյանի** հետ: Ըստ ԼՂՀ կառավարության կայքէջի, հիմնադրամի ներկայացուցիչներին վարչապետը պատմել է տնտեսության զարգացման ուղղությամբ կատարվող քայլերի մասին, պատասխանել հնչած տարաբնույթ հարցերին: Հարությունյանը հատկապես առանձնացրել է շինարարության եւ գյուղատնտեսության ոլորտները:

Վարչապետը հույս է հայտնել, որ Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումը տեսանելի կլինի շինարարության աճի հետ: Եթե 2005-2006թթ. շինարարության ծավալը 40-50 միլիոն դոլարի շրջանակում էր, ապա այսօր հասել է 120-130 միլիոն դոլարի շեմը: Շինարարության կտրուկ աճին նպաստել է համահայկական կառույցը: Հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն **Արա Վարդանյանը** գոհունակությամբ նշել է այս փաստի խթանիչ հիմնական գործոնը. վերջին 2-3 տարվա ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի աճին նպաստել է կառավարության համաֆինանսավորումը՝ իրականացվող բոլոր աշխատանքներում:

Ստեփանակերտի օդանավակայանի պաշտոնական բացման եւ Ստեփանակերտ-Երեւան առաջին թռիչքի հետաձգման վերաբերյալ հիմնադրամի տեղական մարմիններին գործադիրի ղեկավարը տեղեկացրել է հանրապետության նախագահի դիրքորոշմանը. օդանավակայանը կաշխատի, երբ կապահովվեն անվտանգության անհրաժեշտ պայմանները:

Արա Հարությունյանը նաեւ վերաբնակեցման, աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ իրականացվող քայլերից խոսեց: Հատկանշական է, որ վերջին 6-7 ամսում 300 ընտանիք է վերաբնակեցվել Քաշաթաղի շրջանում:

**Ա. Հ.**

# Հայաստանը ամենախաղաղասեր երկիրն է՝ Բոսֆորից մինչեւ Կասպից ծով

**Ավստրալիայի խաղաղության եւ տնտեսության ինստիտուտը բրիտանական The Economist հանդեսի հետ համատեղ հրապարակել է խաղաղության համաշխարհային գործակցի վարկանշային ցուցակը: Խաղաղասիրությունը փորձագետները դիտարկում են մի շարք գործոններով, օրինակ՝ զինված ուժերի քանակը, ծախսերը ռազմական ոլորտում, հարեւանների հետ կոնֆլիկտները, ներքին կոնֆլիկտների պարագայում զոհերի թիվը, ոստիկանների թիվը՝ բնակչության համեմատ, քաղաքացիների կրթական ցենզը եւ մարդու իրավունքների նկատմամբ վերաբերմունքը: Աշխարհի ամենախաղաղասեր երկիր է ճանաչվել Իսլանդիան: Երկրորդ տեղում նախորդ տարվա առաջատար Նոր Զելանդիան է, երրորդում՝ Ճապոնիան: Չորրորդ տեղում Դանիան է, լավագույն հնգյակը եզրափակում է Չեխիան: Վերջին հորիզոնականներում են Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Աֆղանստանը, Սուդանը, Սոմալին, Իրաքը եւ Հյուսիսային Կորեան: Ռուսաստանը 147-րդն է: Իսկ մեր տարածաշրջանում ամենախաղաղասերը Հայաստանն է: Մենք վարկանշային ցուցակում 109-րդն ենք: Վրաստանը զբաղեցրել է 134-րդ հորիզոնականը, Ադրբեջանը 122-րդն է: Իրանը զբաղեցրել է 119-րդ հորիզոնականը, Թուրքիան՝ 127-րդը: Ցուցակում, որ հրապարակվում է 2007 թվականից, ընդգրկված է 149 երկիր: Հ. Ա.**

# Պանիր «Մոցարելա». Ավստրիայում՝ 4,4 եվրո, Հայաստանում՝ 12,5 եվրո

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Ավստրիա, Գրաց**

Հայաստանի հանրության վերջին տարիների մտահոգություններից մեկը պանրի գինն է: Երբեմնի սիրված «Հաց ու պանիր, կեր ու բանիր» ասացվածքն այսօր արդեն այն ազդեցությունը չունի, որն առկա էր անգամ մի 8-10 տարի առաջ: Հայկական արտադրության այս կաթնամթերքի հարցում գնից առավել մտահոգում է պանրի որակը. «Լոռի» ու «Չանախ» պանիրներին նախապատվություն տվողները դժվարությամբ թե դժկամությամբ վճարում են իրենց առաջարկվող գները, փոխարենը ձեռք են բերում անգամ 2-3 տարի առաջվա այս արտադրանքների հետ գրեթե կապ չունեցող պանիրներ:

Պանրի գին, որակ, քանակ հասկացություններին առավել անմիջականորեն են շփվում եվրոպացիները, ովքեր սովորություն ունեն այն օգտագործել թե՛ նախաճաշին, թե՛ ընթրիքին, թե՛ երեկոյան ճաշելիս: Սեղանին սովորաբար հայտնվում է մեկից ավելի տեսականիով, շատ դեպքերում այլ ուտեստներից առավել քանակով ու սեղանակիցներից յուրաքանչյուրի համար առանձնացված ափսեներով:

Ավստրիացիներն այս առումով բացառություն չեն: Երկրի 2-րդ՝ 300 հազար բնակչությամբ Գրաց քաղաքի առեւտրային ցանցում կարելի է հանդիպել տեղական արտադրության բազմաթիվ արտադրատեսակների, որոնք բոլորն էլ բարձր յուղայնություն ունեն: Դրանք հիմնականում անալի են, փափուկից մինչեւ չոր տեսքով: Ավստրիացիներն առանձնակի ոգեւորությամբ են նշում, որ իրենց սպառած պանիրները պատրաստվում են միայն անարատ կաթից, որի հսկայական քանակներ արտադրվում են քաղաքամերձ ֆերմերային տնտեսություններում: Անշուշտ հաճելի է արձանագրել, որ հենց Ավստրիայից Հայաստանի Հանրապետություն ներկրվեց մինչեւ 12000 լիտր տարեկան կաթնատվություն երաշխավորող կովերի որոշակի գլխաքանակ: Երբ 4 տարի առաջ սկսվեց կառավարական այս ծրագիրը, խոստումներ հնչեցին, որ դա կնպաստի երկրում կաթի արտադրության ավելացմանը, որն էլ իր հերթին կայունություն կհաղորդի կաթնամթերքների որակի ու գնային հարցերում: Առաջինի առումով տեսանելի ոչինչ էլ չստացվեց, իսկ ահա գները փոփոխվեցին՝ 320 դրամ արժեցող կաթի լիտրը դարձավ 360 դրամ: Այս գնից աննշան բարձր է կաթի լիտրի արժեքը Գրացի սուպերմարկետներում, բայց պետք է նկատի ունենալ, որ այստեղ գնի մեջ զգալի է հարկվող մասը, որը երբեմն հասնում է 40-60 տոկոսի: Ավստրիայի տնտեսության 320 մլրդ դոլար ՀՆԱ-ի պարագայում բյուջեն կազմում է 190 մլրդ դոլար: Այս միջոցները երկրի իշխանությունները ծառայեցնում են բնակչության սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը, այլեւայլ նպաստների, որոնք անմիջականորեն նպաստում են ավստրիացիների ու ներգաղթյալների կյանքի տարբերական բարելավմանը:

*Տես էջ 8*

# Կառավարությունը կոմպրոմատային մեթոդներով չի առաջնորդվում

Երեկ ազգային ժողովում քննարկվում էր ՀՅԴ հարցադրումը՝ կառավարության պատասխանատվության վերաբերյալ: ՀՅԴ-ից Արմեն Ռուստամյանի ներկայացմամբ՝ կառավարությունը սոցիալ-տնտեսական քաղաքականության, ճգնաժամի հաղթահարման ուղղություններով չի ապահովել անհրաժեշտ ցուցանիշները: Այդ հարցապնդումը քվեարկվեց, ստացավ կողմ 10 եւ դեմ 13 քվե՝ դահլիճում պատգամավորներն էլ սակավ էին: Կառավարության ներկայացուցչի՝ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանի պատասխան-հիմնավորումներին արձագանքեց նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը՝ թե պետք չէ ամեն ինչ բարդել նախորդ կառավարությունների վրա:

ՀՅԴ նախաձեռնության մասին երեկ լրագրողները հարց ուղղեցին վարչապետ Տիգրան Սարգսյանին, որը նկատեց, թե նորմալ է վերաբերվում քաղաքակիրթ քաղաքական պայքարի այս ձեւին: Ըստ վարչապետի՝ այդ հարցապնդումը քաղաքական պայքարի ձեւ է միայն, որ կուսակցության հեղինակությունը բարձրացնելու համար ընտրել է ՀՅԴ-ն, նպատակն էլ՝ ընտրությունների ժամանակ վստահություն վաստակելն ու քվե ստանալն է: Իսկ թե իրականում կառավարությունը նեղվե՞լ է այս հարցապնդումից եւ կոմպրոմատային պատասխան է տալու ՀՅԴ-ին, այսպիսի հարց հնչեցրեց լրագրողներից մեկը, Տ. Սարգսյանը հակադարձեց, թե չի նեղվում ՀՅԴ հարցերից, «նրանք մեր գործընկերն են», իսկ հարցապնդումը ստանալուց հետո հրավիրել եւ քննարկել է նրանց հետ նյութը ու բնական, նորմալ երկխոսություն է տեղի ունեցել: Կոմպրոմատ օգտագործելն էլ կառավարության մեթոդը չէ, այդպիսի մեթոդներ չի կիրառում: Մեղքը նախորդ կառավարությունների վրա բարդելու միտում ընդհանրապես չկա, դա կարելի է տեսնել հենց ՀՅԴ հարցապնդմանը կառավարության պատասխաններում. «Մեր պարզաբանումների մեջ քննարկվում են երեւույթները, եւ թե ճգնաժամը ի՞նչ թույլ եւ ուժեղ կողմեր է բացահայտել մեր տնտեսական համակարգում: Եվ մենք ունենք համարձակություն եւ ազնվորեն ներկայացրել ենք այն թույլ կողմերը, որն ուներ մեր տնտեսական համակարգը եւ այն բացերը, որ մենք քաղել ենք, մեզ մեղադրել, որ մենք փորձում ենք մեղքը բարդել նախորդ կառավարությունների վրա, անընդունելի եմ համարում: Մենք պատասխանատու ենք նախորդ կառավարությունների կողմից իրականացված բարեփոխումների համար, եւ ապահովում ենք շարունակականությունը մեր կառավարությունների: Եվ մենք իրականացնում ենք այն քաղաքականությունը, որը որդեգրվել էր նաեւ նախորդ կառավարությունների կողմից: Մենք չենք տարանջատում նախորդ կառավարություններին մեզանից, որովհետեւ մենք ապահովում ենք շարունականությունը, մենք կիսում ենք նաեւ նախորդ կառավարությունների պատասխանատվությունը, մենք պատասխանատու ենք ե՛ւ լավ ձեռքբերումների համար, ե՛ւ այն բացթողումների համար, որոնք առկա են եղել, ե՛ւ որոնք այսօր կան», ասաց վարչապետը:

**Ս. Խ.**

# Շարունակվում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը



Համաշխարհային բանկի «Դպրոցական սնունդ» ծրագիրը Հայաստանում իրականացվում է ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի ու Ռուսաստանի գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ: Կրթության եւ գիտության նախարարության հասարակայնության հետ կապերի ու տեղեկատվության վարչության պետ **Արթուր Բաղդասարյանը «Ազգի»** հետ զրույցի ժամանակ նշեց, որ ՄԱԿ-ի վերոնշյալ ծրագիրն անվճար տրամադրում է սննդամթերք, որով պատրաստվում է դպրոցական սնունդը: Ծնողական խորհուրդը, գյուղապետարանը կամ քաղաքապետարանը նույնպես ներդրում են ունենալու, որպեսզի աշակերտներին տրամադրվող սնունդն ավելի հագեցած լինի: Արթուր Բաղդասարյանն ասում է, որ «Դպրոցական սնունդ» ծրագիրը վերաբերում է միայն 1-4-րդ դասարանցիներին ու հիմնականում ներառում է մարզերի աշակերտներին: Ծրագիրը Հայաստանում իրականացվում է 2010 թվականի հոկտեմբերից, մեկնարկել է Տավուշի ու Գեղարքունիքի մարզերից եւ նպատակ ունի ընդգրկելու շուրջ 50000 աշակերտների: Արթուր Բաղդասարյանն ավելացնում է, որ ծրագրի շնորհիվ երեխաները հնարավորություն են ունենում դպրոցում ստանալու առողջ ու անվտանգ սնունդ: ԿԳՆ-ի փոխանցմամբ՝ ծրագիրն իրականացվում է նաեւ ռուսական նվիրատվության շնորհիվ: ԿԳՆ-ից նաեւ տեղեկացանք, որ Երեւանում երեկ սրան առնչվող խորհրդաժողով է մեկնարկել: Երկօրյա խորհրդաժողովը կազմակերպել են ԿԳՆ-ն ու ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիրը: Խորհրդաժողովի նպատակն է մշակել «Դպրոցական սնունդ» ծրագրի տեսլականը:

**Ի. Պ.**

ՀԱԿԱԱՍՈՒԼԻՍ

# Նախկին պաշտոնյան հավաստիացնում է, որ կապ չունի «օրենքով գող» Պզոյի հետ



**Սնկի պես աճող մամուլի ակումբներից մեկում՝ նորաբաց «Ընտրություն» ակումբում երեկ ասուլիս էր կազմակերպվել: Ակումբի հյուրը արդարադատության նախարարության նոտարիատի բաժնի նախկին ղեկավար Մարիամ Գաբոյանն էր:**

**Նախկին պետը նախ տեղեկացրեց, որ նախարարության նոտարիատի բաժինը չի լուծարվել, այլ վերակազմակերպվել է, եւ նոտարիատի բաժնի 3 աշխատողներին, այդ թվում եւ իրեն, ուղարկել են քաղաքացիական ծառայության կադրային ռեզերվ. «Իսկ քաղաքացիական ծառայությունը մեր հանրապետությունում արժեք չունեցող հասասասություն է, համարում եմ, որ դա ավելորդ կազմակերպություն է»: Ճի՞շտ էր, թե՞ սխալ իր հետ կատարվածը՝ Մարիամ Գաբոյանը չվիճարկեց, սակայն նրա վրդովված կեցվածքն արդեն իսկ բողոք էր նշանակում: Պատմեց, որ իրեն աշխատանքից հեռացնելու հրամանը տվել է ոչ թե նախարար Հրայր Թովմասյանը, այլ նախարարության աշխատակազմի ղեկավարը: Հետո Մարիամ Գաբոյանը փորձել է տեսնել նախարարին. «Սակայն Հրայր Թովմասյանն ինձ չընդունեց, որեւէ հարցում նա ինձ հետ չի խորհրդակցել: Հրայր Թովմասյանը կադրային այս քայլն իրականացրել է օրենքի խախտումով: Իսկ ես բողոքարկելու ցանկություն չունեմ»:**

**Այնուհետեւ դիմելով իր «սիրելի լրագրողներին»՝ Մարիամ Գաբոյանը խոստովանեց, որ պաշտոնավարման տարիներին լրագրողների հետ առնչվելու ցանկություն չի ունեցել. «Բայց արդեն պաշտոն չունենալու պարագայում որոշեցի, որ հանդիպենք ու պարզաբանեմ մամուլում տեղ գտած թյուրիմացությունները, որպեսզի պատվեր կատարողներն էլ իրենց վաս զգան»: Իսկ ովքե՞ր են այդ պատվեր կատարողները, եւ ո՞վ ի՞նչ պատվեր է կատարել՝ բանախոսը չպարզաբանեց:**

**Ինչ վերաբերում է վարկածին, թե Մարիամ Գաբոյանի պաշտոնանկությունը կապված է Միացյալ Նահանգներում ձերբակալված հայտնի քրեական հեղինակության՝ Պզոյի գործին, սրա վերաբերյալ բանախոսը նշեց. «Ես էդ Պզո՞ է, թե՞ Պզե է, դրա մասին կարդացել եմ ձեր նման ձեր լրատվամիջոցներից: Պզոյի գործով ես որեւէ գործարք չեմ արել»: Իսկ դիտարկմանը՝ թե Պզոյի կապերն իշխանության էլիտայում այնքան շատ էին ու այնքան խոր, որ կարող էր դրանց միջոցով ազդել նոտարական ինստիտուտի վրա, Մարիամ Գաբոյանը պատասխանեց. «Ինչո՞վ ազդեր, փո՞ղ պետք է տար, բայց եթե նա եկել է օրինական գործարք անելու, ի՞նչ պետք է տա նոտարին: Սակայն ես ձեզ ուրիշ բան ասեմ՝ նոտարական գործարք կատարելիս էլիտայի ներկայացուցիչներից ոչ մեկը նույնիսկ պետական տուրքը չի վճարում»:**

**Բացի լրագրողներից՝ ասուլիսին նաեւ ներկա էին քաղաքացիներ, որոնք եկել էին նոտարիատի բաժնի ու նոտարների դեմ իրենց բողոքը բարձրաձայնելու: Նրանցից Մանյա Արզումանյանը հետեւյալ հայտարարությունն արեց. «Ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ ապացույցներ ունեմ, որ դատարանների որոշ դատավորներ Մարիամ Գաբոյանի ու նրա նոտարների հետ համագործակցում են: Մարիամ Գաբոյանի ապօրինությունների «թելը թելել են» նաեւ դատավորներն ու նոտարները»: Մանյա Արզումանյանը, որը վրդովված ընդհատեց ասուլիսը, բացատրեց, որ տուժել է նոտարների անբարեխիղճ աշխատանքից: «Իսկ նոտարների կատարած կեղծիքների տանիքը Մարիամ Գաբոյանն է», ավելացրեց նա:**

**Պետական կոչված նոտարների անբարեխիղճ գործունեությանն «Ազգ» օրաթերթը նույնպես անդրադարձել է: Եվ ինչքան էլ նախկին պաշտոնյան ու նոտարները պնդեն, թե նոտարական համակարգում չկան ապօրինություններ ու կոռուպցիա, փոխարենը երբեմն խախտվում են սպառողների շահերը, միեւնույնն է, երեկ նոտարներից բողոքող քաղաքացիների կեցվածքը նույնպես փաստում էր միանգամայն հակառակը:**

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Համաներման նախագիծը քննարկվեց, քվեարկությունն՝ այսօր

*1-ին էջից*

Նախագիծը նախատեսում է պատժից ազատել. 1. առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված մարդկանց, 2. այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ պատժի կրումը հետաձգվել է, 3. ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց: Պատժից ազատվում են նաեւ առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները, 60 տարին լրացած անձինք, հանցագործությունը մինչեւ 18 տարին կատարած այն անձինք, որոնք նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել: Այն կտարածվի համաներումը ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ՝ հղի կանանց կամ մինչեւ 3 տարեկան երեխա ունեցող անձանց վրա: Առանձնակի վերաբերմունք է դրսեւորվում նաեւ այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր Հայրենական պատերազմի, ՀՀ կամ ԼՂՀ պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են, հավասարեցված են նրանց կամ ունեն բռնադատվածի կարգավիճակ, մարտական գործողություններում զոհված կամ օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ամուսին, զավակ կամ ծնող են: Այս կարգին պատկանող հանցագործություն կատարած եւ դատապարտված անձանց վերաբերյալ նախատեսվում է պատժի ազատում առավելագույնը 5 տարի ազատազրկման դատապարտվածներին: Եթե դատապարտվել են առավելագույնը 9 տարի ժամկետով ազատազրկման եւ համաներման որոշման ուժի մեջ մտնելու օրը կրել են ոչ պակաս, քան պատժի 1/4-ը՝ նրանց հանդեպ եւս կիրառվում է: Պատժից ազատման տարբերակված պայմաններով նախատեսված է նաեւ այն անձանց պատժից ազատում, որոնք դիտավորյալ հանցագործություն կատարելու համար նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել եւ դատապարտվել են առավելագույնը 5 տարով ազատազրկման, իսկ համաներման որոշումն ուժի մեջ մտնելու որոշման օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան պատժի 1/4-ը, նույն կերպ է լինելու առավելագույնը 10 տարի ազատազրկման ենթարկված եւ համաներման ուժի մեջ մտնելու որոշման օրվա դրությամբ պատիժը 1/3-ով կրածների վերաբերյալ: Նախատեսվում են նաեւ պատժից ազատման պայմաններ անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար, համաձայն որոնց պատժից ազատվում են առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման ենթարկված անձինք եւ առավելագույնը 10 տարի ժամկետով ազատազրկվածները, որոնք համաներման որոշման ուժի մեջ մտնելու օրը կրել են պատժի ոչ պակաս, քան պատժի 1/4-ը: Նախատեսված են քրեական հետապնդում չհարուցել եւ քրեական հետապնդում չիրականացնել հետաքննության մարմիններում, նախաքննության մարմիններում կամ դատարանի վարույթում գտնվող մինչեւ 2011 թվականի մայիսի 1-ը կատարված հանցագործություններով քրեական գործերով եւ դրանք կարճել:

Պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը, ելույթ ունենալով՝ քաղաքական ենթատեքստ ունեցող համարեց անկախության շրջանի 9 համաներումներից վերջին երկուսը, հատկապես այս մեկը, որը կտարածվի մարտի 1-ի գործով դատապարտյալների վրա. ըստ նրա՝ 2009 եւ 2011 համաներումներով նախագահ Սարգսյանը փորձ է կատարել 2008 թվականի մարտի 1-ին ստեղծված լարվածությունը մեղմացնելու ուղղությամբ եւ այդպիսով՝ քաղաքական գործընթացները ՀՀ-ում քաղաքական հարթություն են տեղափոխվում, այլ ոչ թե ինչպես նախկինում՝ քրեական հարթությունում են տեղի ունենում:

Այն հարցադրումը, թե ո՞ւմ ճնշմամբ է կատարվել համաներումը՝ իշխանության գթասրտությա՞ն, ընդդիմությա՞ն, թե՞ միջազգային հանրության ճնշմամբ, ըստ **Դալլաքյանի,** այդ երեք գործոններից յուրաքանչյուրի բացարձակացնելը սխալ է, այդ երեքն էլ դեր ունեցել են: Արտահերթ ելույթով հանդես եկած **Հովիկ Աբրահամյանը** սպասված եւ արդարացված քայլ համարեց համաներումը՝ համոզված, որ դրական ազդեցություն կունենա հասարակությունում առկա մթնոլորտի վրա: «Վստահ եմ, որ Հայաստանի Հանրապետության նախագահի առաջարկած եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից հայտարարվող համաներումը ճիշտ ժամանակին իրականացվող եւ միանգամայն հիմնավոր քայլ է, որով փորձ է արվում քաղաքական օրակարգի եւ քաղաքական մշակույթի մեջ որոշակի բեկում մտցնելով վերջնականապես հաղթահարել ներքաղաքական լարվածությունը», ասաց ԱԺ նախագահը:

Այսօր կներկայացվի նախագծի վերջնական տարբերակը եւ կքվեարկվի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# Գերմանական «Քրոնիմեսը» եւ Հայաստանի արդյունաբերությունը

## *Ընկերության դերը ոլորտի զարգացման եւ հայ-գերմանական համագործակցության մեջ*

Երեքշաբթի երեկոյան վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելել էր հայ-գերմանական «Էլբաս» ընկերություն: Նրա այցի մասին պատմող լրատվական հաղորդագրություններում նշվում է, որ այս ընկերությունն արտադրում է մարտկոցներ գրեթե բոլոր տեսակի ավտոմեքենաների համար, ունի ձուլման, մածուկապատրաստման եւ մածուկապատման, էլեկտրոլիտի պատրաստման, ձեւավորման եւ հավաքման, օդի ու ջրի զտման եւ մշակման արտադրամասեր, որակի հսկողության ժամանակակից սարքավորումներով հագեցած ֆիզիկական եւ էլեկտրամեխանիկական լաբորատորիաներ, 2011-ի մայիսին Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից շնորհվել է Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատ, իսկ ներկայումս աշխատում է 145 մարդ: «Էլբասը» գործարկվել է 2010-ի նոյեմբերին, նրա տարեկան արտադրողականությունը կազմում է մինչեւ 500 հազար միավոր մարտկոցներ: «Էլբասի» բաժնետոմսերի 51 տոկոսը պատկանում է գերմանական «Քրոնիմես Մայնինգ» կազմակերպությանը: Հայաստանում արդեն տեւական ժամանակ գործող այս ընկերության մասին թերեւս կարելի է փոքր-ինչ ավելին ասել, նկատի ունենալով նրա դերը Հայաստանի արդյունաբերության զարգացման եւ այս ոլորտում հայ-գերմանական համագործակցության մեջ:



«Քրոնիմես Գրուպը» հիմնադրվել է 1980-ին, Գերմանիայի Կառլսռուհե քաղաքում, Գյունտեր Պիլարսկու կողմից: Ներկայումս ընկերությունը պողպատի արտադրության բնագավառի աշխարհի խոշոր մատակարարներից է: Հանքարդյունաբերության ոլորտում ընկերությունը միաժամանակ իրականացնում է եւ արտադրական, եւ առաջնային ու երկրորդային հումքի առքուվաճառքի գործունեություն: Այն ներկայացված է Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում եւ Ասիայում, ունի ավելի քան 56 դուստր ձեռնարկություններ ողջ աշխարհում, 2010-ին արձանագրել է մոտ 4 մլրդ դոլարի շրջանառություն:

Հայաստանում «Քրոնիմես» ընկերությունների խումբն իր գործունեությունը սկսել է 1999-ին՝ «Մաքուր երկաթի գործարան» ընկերության հետ ստեղծելով մոլիբդենի եւ ֆեռոմոլիբդենի արտադրության համատեղ ձեռնարկություն: 2004-ին «Քրոնիմես Մայնինգը» սկսել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի»՝ բաժնետոմսերի ձեռքբերման բանակցությունները եւ 2005-ի սկզբին ձեռք բերել բաժնետոմսերի 60 տոկոսը: Այդ թվականից սկսած կոմբինատում կատարվել է ավելի քան 300 մլն դոլարի ներդրում, ապահովելով արտադրական հզորությունների շուրջ 75 տոկոս աճ:

«Քրոնիմեսի» հիմնադիր Գյունտեր Պիլարսկին 2006-ից նաեւ Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոսն է Բադեն-Վյուրթեմբերգի երկրամասում եւ մեծ ներդրումն ունի երկու երկրների տնտեսական համագործակցության ակտիվացման գործում: Նա անցյալ տարի Գերմանիայում տեղի ունեցած Հայ-գերմանական տեղեկատվական տեխնոլոգիաների եւ բիզնես համաժողովի նախաձեռնողներից եւ կազմակերպիչներից է: Լինելով Հայաստանի պատվո հյուպատոսը, **Գյունտեր Պիլարսկին** էապես նպաստել է գերմանացի ներդրողների, Կառլսռուեի Առեւտրաարդյունաբերական պալատի եւ Հայաստանի Առեւտրաարդյունաբերական պալատի միջեւ գործարար կապերի հաստատմանը:

Խոսելով Հայաստանում իր ղեկավարած ընկերության գործունեության եւ հեռանկարների մասին, գերմանական ընկերության հիմնադիրը, վկայակոչելով Հայաստանում ընկերության արդեն 16 տարվա գործունեությունը, հավաստիացնում է, որ այդ ընթացքում միայն դրական արդյունքներ են ունեցել եւ որ Հայաստանը շատ նպաստավոր պայմաններ է առաջարկում ներդրողների համար, հատկապես ցածր հարկային դրույքաչափերի եւ կրթության բարձր մակարդակի առումով: Չնայած այլ երկրներում ծավալած գործունեությանը, «Քրոնիմեսի» ղեկավարը նաեւ ընդգծում է, որ իրենց հիմնական գործունեությունը ներկայումս կենտրոնացրել են Հայաստանում: Որ գերմանական ընկերությունը Հայաստանը դիտարկում է որպես բարենպաստ միջավայր գործունեություն ծավալելու համար, հաստատվեց նաեւ «Էլբասի» հիմնադրմամբ: Այսինքն, բացի հումքի արդյունահանումից եւ մշակումից, գերմանական խոշոր ընկերությունը մեր երկրում ձեռնարկել է արտահանման ուղղվածություն ունեցող սարքավորումների արտադրություն: Սա հատկանշական օրինակ է, որ Հայաստանում հնարավոր է արդյունաբերություն զարգացնել եւ հատկապես վերջնական արտադրանք թողարկող արդյունաբերություն:

Հիշեցնենք, որ ժամանակին մեր երկրում գործել են սարքաշինական, հաստոցաշինական, մեքենաշինական եւ էլեկտրատեխնիկական ավելի քան 150 ձեռնարկություններ, որոնց հզորությունները փոշիացան 90-ականներին: Մնում է միայն հուսալ, որ վերջին 20 տարվա ընթացքում առաջին անգամ կառավարության մշակած արդյունաբերության զարգացման հայեցակարգը, հաշվի առնելով ներկա իրողությունները, հնարավորություններ կստեղծի արդյունաբերական նոր հզորությունների զարգացման համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Եվրոպական հարեւանության նոր փողերն ու բարեփոխումային ակնկալիքները

Եվրոմիությունը լրացուցիչ միլիարդներ է պատրաստվում տրամադրել Եվրոպական հարեւանության քաղաքականության համար: Պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, երեկ, Եվրոհանձնաժողովի կողմից ԵՀՔ առնչությամբ մոտեցումների հրապարակումից հետո ԵՀ նախագահ **Ժոզե Մանուել Բարրոզոն** հայտարարել է, որ ԵՄ աջակցությունը հարավային եւ արեւելյան գործընկերներին կավելանա եւս 1,24 միլիարդ եվրոյով՝ հաջորդ երկու տարիների համար նախատեսված 7 միլիարդի ընդհանրական տեսքով:

«Սա ավելին է, քան լրացուցիչ գումար հասկացնելը: Սա շոշափելի արտահայտություն է գործընկերներ երկրներում կատարվող բարեփոխումներում մեր ներգրավվածության առումով», հայտարարել է Բարրոզոն, ավելացնելով, որ դա միեւնույն ժամանակ ցույց է տալիս ԵՄ լրջությունը՝ «օգնելու նրանց, ովքեր ձգտում են քաղաքական ազատության ու առավել լավ ապագայի»: Եվրոհանձնաժողովի նախագահը տեղեկացրել է, որ կստեղծվեն տարբեր կառույցներ, այդ թվում, օրինակ, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ՝ խրախուսելու գործընկերների ժողովրդավարական փոփոխությունները, կամ քաղաքացիական հասարակության գործիք՝ բարձրացնելու ոչ կառավարական դերակատարների քաղաքական նշանակությունը:

ԵՄ արտաքին հարցերով հանձնակատար **Քաթրին Էշթոնն** ու ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար **Շտեֆան Ֆյուլեն** իրենց հերթին ներկայացրել են «նոր եւ հավակնոտ» ԵՀՔ-ը՝ ավելի խոշոր դրամական հատկացումներով: Միեւնույն ժամանակ, Բարրոզոյի արդեն իսկ ներկայացրած թվային տվյալների կողքին Ֆյուլեն ու Էշթոնն ավելացրել են ԵՀՔ վերանայված ռազմավարության հիմնական առաջնահերթությունները՝ «ավելի շատ միջոցներ՝ առավել շատ բարեփոխումների համար» մոտեցմամբ:

ԵՀՔ նորացված մոտեցմամբ՝ առաջարկվում են աջակցության նոր տարբերակներ ու ձեւեր հասարակության առավել շատ հատվածների:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# Ոչ այնքան նոր լիդերի, որքան միջավայրի փոփոխություն

## *Իսկ նոր լիդերներ փոփոխված միջավայրն ինքը կծնի*

*ԵՊՀ քաղաքական ինստիտուտների եւ գործընթացների ամբիոնի վարիչ **Գարիկ Քեռյանի** մեկնաբանմամբ՝ քաղաքական լիդերը պետք է լինի տաղանդավոր, կարողանա գրավել մարդկանց, ունենա հումորի զգացում, լինի հեղինակություն եւ այլն: Այսպիսի որակներով մարդ, որպես կանոն չեն դառնում, կամ լինում են, կամ՝ ոչ: Այդուհանդերձ՝ ունե՞նք այսօր նոր լիդերներ ու նրանց հասարակական պահանջարկ: Եթե ունենք, ապա կարողանո՞ւմ են այդ նոր լիդերները արտահայտվել, ի՞նչ խոչընդոտներ կան այսօր Հայաստանում նոր լիդերի ճանապարհին ու կա՞ն:*

Այս հարցերը երեկ քննարկվեցին Մամուլի ազգային ակումբում, որը՝ ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI)-ի հետ համատեղ կազմակերպել էր հասարակական-քաղաքական քննարկում՝ «Նոր քաղաքական լիդերների ձեւավորման խոչընդոտները եւ հնարավորությունները Հայաստանում» թեմայով: Քննարկմանը մասնակցեցին ԱԺ ՀՀԿ խմբակցությունից՝ Կարեն Ավագյանը, ԲՀԿ-ից՝ Վահե Էնֆիաջյանը, ՀՅԴ-ից՝ Լիլիթ Գալստյանը, «Ժառանգություն» խմբակցության նախագահ Ստյոպա Սաֆարյանը, Ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանը, ՀՌԱԿ ատենապետ Էդվարդ Անտինյանը, ՕԵԿ պառլամենտական խմբակցության փորձագետ Արթուր Միսակյանն ու ԵՊՀ ամբիոնի վարիչ Գարիկ Քեռյանը:

Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ **Ավագյանը**, «նոր լիդերը» ընկալելով զուտ որպես երիտասարդ լիդեր, նշեց, որ իրենց կուսակցությունն ապացուցել է, որ իրականացնում է սահուն սերնդափոխություն. «Մեր կուսակցության երիտասարդական թեւը երկրի քաղաքական ոլորտի համար դարբնոց է եղել: Այսօր հենց մենք ԱԺ-ում ունենք բազմաթիվ երիտասարդ կուսակիցներ, որոնց կուսակցությունը վստահում է»: Իշխող կոալիցիայի մյուս կուսակցության՝ ԲՀԿ-ի ներկայացուցիչ **Էնֆիաջյանը** նույնպես «նոր լիդերը» ընկալելով որպես զուտ երիտասարդ լիդեր, նշեց, որ կոնկրետ իրենց կուսակցության քաղխորհրդի պատվիրակների 30 տոկոսը երիտասարդներ են: Ավելին՝ Էնֆիաջյանը ներկայացրեց ԲՀԿ հայտարարությունը եւ կոչով դիմեց բոլոր կուսակցություններին՝ նպաստել երիտասարդության առավել ակտիվացման երկրի քաղաքական կյանքում: ԲՀԿ-ն կոչ է անում առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցել ցանկացող կուսակցություններին՝ իրենց համամասնական ցուցակներում ներառել նվազագույնը 10 տոկոս երիտասարդներ:

Հիշեցնելով Սոկրատեսի խոսքերը՝ «Լիդերը նա է, որը գիտի ինչ անել տվյալ պահին», ՀՅԴ ներկայացուցիչ **Լիլիթ Գալստյանը** նախ սահմանազատեց «լիդեր» եւ «ղեկավար» հասկացողությունները, այնուհետեւ ընդգծեց, որ նոր լիդերների առաջացման համար միջավայրի փոփոխություն է պետք. «Չնայած մենք արդեն 20 տարի ժողովրդավարացման ուղին ենք բռնել, բայց միջազգային գնահատականներով նույն՝ ժողովրդավարության ցուցիչներով մենք բավական հետին հորիզոնականներ ենք զբաղեցնում: Համակարգի փոփոխություն է անհրաժեշտ, գաղտնիք չէ, որ լիդերն առաջանում է հենց համակարգում»: Լիլիթ Գալստյանը շեշտեց, որ լիդերի պահանջը պետք է լինի «ներքեւից», այնինչ մեզանում, որտեղ կան «պրոյեկտային», «գրպանային» կուսակցություններ՝ ինչ-որ կոնկրետ նպատակի համար ստեղծված, չեն կարող ունենալ կամ ստեղծել լիդերներ, հենց որոնց պահանջն են զգում «ներքեւում»: «Մենք ոչ միայն ընդհանուր՝ երկրի մակարդակով ժողովրդավարություն չունենք, այլ չունենք ներքին կուսակցական ժողովրդավարություն», ընդգծեց ՀՅԴ ներկայացուցիչը: Նոր լիդերների պակասի առումով Լիլիթ Գալստյանը առանձնացրեց նաեւ «ազգային առանձնահատկություն» դարձած՝ «լիդերներին փոշիացնելու» հատկությունը, երբ վստահություն չկա ոչ մեկի հանդեպ:

«Ժառանգությունից» **Ստյոպա Սաֆարյանը**, հակադարձելով ՀՀԿ եւ ԲՀԿ պատվիրակների «հանգստացնող» կարծիքներին, թե «քաղաքական կյանքում տեղի է ունենում առողջ սերնդափոխություն», տարակուսանք հայտնեց. «Նոր լիդերը, որը թրծվել է իշխանական ապարատում եւ նույն միջավայրի մասնիկն է, ինձ պետք չէ»: Ընդհանուր առմամբ՝ Սաֆարյանը Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելը «վտանգավոր» մասնագիտություն անվանեց. «Ամեն մեկը չէ, որ կգնա համարձակության այսօր Հայաստանում զբաղվելու քաղաքականությամբ, նույնիսկ լիդերի հատկանիշներով մեկը: Այսօր Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելը նաեւ թանկ հաճույք է, դրանով զբաղվողը պետք է գումար ունենա», նկատեց «Ժառանգության» ներկայացուցիչը՝ ընդհանուր առմամբ համաձայնելով Լիլիթ Գալստյանի հետ, որ խնդիրը առկա միջավայրի փոփոխության մեջ է:

ՕԵԿ-ի փորձագետ **Արթուր Միսակյանը**, շեշտելով, որ ինքն այսօր Հայաստանում չի տեսնում որեւէ՝ թեկուզ ընդդիմադիր կուսակցություն, որը դեմ է իր շարքերում սերնդափոխությանը (չգիտես ինչու քննարկման ներկաներից շատերը՝ «նոր լիդերը» հասկանում էին որպես՝ երիտասարդ լիդեր-Հ. Ա.), այդուհանդերձ նկատեց. «Այսօր մեր հասարակությունը 25-30 տարեկան թեկուզ լիդեր երիտասարդին չի ընկալում որպես քաղաքական ու հասարակական խնդիր լուծող: Չի կարող այսօր մեր երկրում 25-30 տարեկան երիտասարդը ունենալ անհրաժեշտ լծակներ՝ ազդելու երկրի քաղաքական իրադարձությունների վրա»: ՕԵԿ-ի փորձագետը վերջում, այնուամենայնիվ, շեշտեց, որ Հայաստանում «առաջ գնալու» համար անհրաժեշտ են խելք, նախաձեռնություն եւ ցանկություն:

ՀՌԱԿ-ի ատենապետ **Էդվարդ Անտինյանը**, սակայն, չի գտնում, որ Հայաստանում «առաջ գնալու» համար միայն վերոհիշյալը բավարար է: «Բացակայում է արդար մրցակցությունը, որն էլ հենց լիդեր ծնողն է: Մեր ժողովուրդն այնքան ասաց՝ փորձված թանը անփորձ մածունից լավ է, որ այդպես էլ էս ժողովուրդը մածուն չկերավ», նկատեց Անտինյանը:

ԺԿ-ի նախագահ **Տիգրան Կարապետյանի** խոսքերով՝ «Հայաստանում նույնիսկ կայացած մարդը չի կայանում, ուր մնաց՝ նոր լիդերը կայանա»: Կարապետյանը նկատեց, որ համատարած ամեն ինչին ու ամեն մեկին հարմարվելու, ընտելանալու մթնոլորտը չի կարող լիդեր ծնել. «Այստեղ արդեն լիդերը կորցնում է իր լիդեր լինելու արժանիքները: Մեր քաղաքական դաշտն է «մենաշնորհված»՝ «բարձր հովանու ներքո»», ասաց Կարապետյանը՝ ներկաներին ուղղելով հարց. «Մի հատ լիդեր ցույց տվեք այսօր, որին ժողովուրդը սիրում է. չկա այդպիսի մեկը»:

Անկախ նրանից՝ «նոր» լիդերը կլինի երիտասարդ, թե պարզապես նոր մարդ, նոր ուժ կամ փոփոխված՝ հին ուժի ներկայացուցիչ, ակնհայտ է, որ մեր երկրի քաղաքական մթնոլորտը լուրջ բարեփոխումների կարիք ունի՝ ոչ միայն նոր լիդերներ ծնելու, այլեւ նրանց «հետեւորդներին» պաշտպանելու համար:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Նույն ջրում երկրորդ անգամ ոտք չեն դնում

«Մոսկովսկիե նովոստի» թերթին նախագահ Սերժ Սարգսյանի տված հարցազրույցից բավական ժամանակ է անցել: Բայց, չգիտես ինչու, Իլհամ Ալիեւի աշխատակազմի արտաքին քաղաքականության հարցերի պատասխանատու Նովրուզ Մամեդովը միայն նոր է «հերքում» դրանում արտահայտված առանցքային գաղափարը, որ Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը կամային որոշմամբ են տրվել Ադրբեջանին: Հավանաբար պետք է եղել Բաքվում «զորակոչել բոլոր կարող ուժերին»: Իսկ նրանք էլ «ճշմարտությունը բացահայտելու» հարցում ուշացել են:

Եվ այսպես, Նովրուզ Մամեդովը պնդում է, որ «Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը չեն մտել Հայաստանի կազմի մեջ: Ռուսական կայսրության փլուզումից եւ Անդրկովկասում անկախ հանրապետությունների հռչակումից հետո Ղարաբաղի հայ բնակչությունն ստեղծել է Հայկական ազգային խորհուրդ, իսկ ադրբեջանականը՝ համարժեք կառույց, որն արտահայտել է ղարաբաղյան ադրբեջանցիների կամքը: Այդ երկու մարմինները Ղարաբաղը համապատասխանաբար հռչակել են Հայաստանի հանրապետության եւ ԱԴՀ մաս: Չի կարելի Ղարաբաղը անվանել «Հայաստանի հանրապետության» (չակերտները ուղղակի տարակուսելի են- Վ. Ա.) մաս 1918-20 թ.թ. միայն այն հիման վրա, որ այդպես էր կարծում, հայտարարում կամ ցանկանում Հայկական ազգային խորհուրդը, որն արտահայտում էր Ղարաբաղի բնակչության փոքրամասնության կարծիքը: Մեծամասնությունն այլ կերպ էր կարծում: Անթույլատրելի է նման մտահանգումների համար հիմք ընդունել գոյություն ունեցած մարմիններից մեկի ինքնակամ որոշումը եւ անտեսել մյուսի կարծիքը, մանավանդ որ արդյունքում հայերը նույնպես որոշել են միանալ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությանը»:

Ինչպես տեսնում ենք, Իլհամ Ալիեւի աշխատակազմի պատասխանատուն այստեղ եւ հետագա ողջ շարադրանքում որեւէ խոսք չի ասում Նախիջեւանի մասին: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ ասելիք չունի: Իսկ այժմ՝ պատմության խեղաթյուրման մասին:

Նախ, Լեռնային Ղարաբաղը քաղաքականապես ինքնակազմակերպվել եւ ինքնակառավարման է անցել ավելի վաղ, քան «Անդրկովկասում անկախ հանրապետությունների հռչակումը»: Երկրորդ, Լեռնային կամ «առհասարակ» Ղարաբաղում «ադրբեջանցիների կամքն արտահայտող» որեւէ մարմին չի ստեղծվել եւ, բնականաբար, չի գործել: Այդ թեմայով Նովրուզ Մամեդովի մտավարժանքներն այսօրվա ադրբեջանական իշխանությունների կողմից շրջանառության դրված՝ «երկհամայնք Լեռնային Ղարաբաղի մասին տեսության» վերագրումն են պատմական անցյալին: Ստեղծվել, գործել, որոշումներ ընդունել եւ Անդրկովկասում բրիտանական զորքերի ներկայացուցչության, Հայաստանի եւ «Ադրբեջանի» կառավարության հետ խնդիրներ քննարկել է Լեռնային Ղարաբաղի բնակչության ներկայացուցիչներից ընտրված Համագումարը՝ իր կողմից ձեւավորված Ազգային խորհրդի միջոցով: Երրորդ, Լեռնային Ղարաբաղի հայությունը ոչ թե փոքրամասնություն, այլ բնակչության ջախջախիչ մեծամասնությունն էր: Չորրորդ, այդ բնակչությունն՝ ի դեմս Ազգային խորհրդի, «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետությանը միանալու» որոշում չի ընդունել: Կողմերի՝ Ազգային խորհրդի եւ «ԱԴՀ կառավարության» միջեւ բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել ժամանակավոր համաձայնություն, ըստ որի Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես, մինչեւ խնդրի վերջնական քննարկումը Փարիզի խաղաղության համաժողովում, ընդունել է Արեւելյան Այսրկովկասում բրիտանական զինվորական ներկայացուցչությունից գեներալ-նահանգապետ նշանակված Սուլթանովի ներկայությունը, այդ եւս՝ ԼՂ հայության ինքնավարության հարգման, նրա ներքին գործերին չմիջամտելու պայմանով:

Մամեդովն ակնհայտորեն կեղծում է, գրելով, թե «1919 թ. ապրիլին դաշնակիցները Սուլթանովի գլխավորության գեներալ-նահանգապետությունը ճանաչել են որպես երկրամասի միակ օրինական իշխանություն»: Դաշնակիցների մասին խոսք լինել չի կարող, քանի որ նման «ճանաչում» դրսեւորել է միայն բրիտանական զինվորական ներկայացուցչությունը: Ընդ որում, Նովրուզովին պետք է շատ հստակ հիշեցնել, որ այն պահին, երբ բրիտանական զինվորական ներկայացուցչությունը նման խնդիր էր դնում, այսպես կոչված «ԱԴՀ»-ն միայն ձեւական առումով էր «պետություն»: Բավական է ասել, որ այդ «պետությունն» առանց բրիտանական զինվորական ներկայացուցչության թույլտվության չէր կարող ոչ «խորհրդարանի», ոչ «կառավարության» նիստ գումարել: Տարածքը, որ իբրեւ կամային որոշմամբ հռչակվել էր Ադրբեջան, այսպիսով, փաստացի կառավարում էր բրիտանական զինվորական ներկայացուցչությունը, մի իրողություն, որն անժխտելի է: Հարկ է նկատել, որ նման «արտաքին կառավարման» ինստիտուտ դաշնակից երկրները չեն կիրառել ոչ Վրաստանում, ոչ Հայաստանում: Սա շատ բան է ասում: Ինքնին «գեներալ-նահանգապետությունն» էլ զուտ բրիտանական պետական կառավարմանը յուրահատուկ հասկացություն է: «ԱԴՀ» կոչված «պետությունն» այլ տարածքներում նման ինստիտուտ չի ձեւավորել: Չի եղել, ասենք, Բաքվի, Շիրվանի կամ Գանձակի գեներալ-նահանգապետություն, եւ նահանգապետեր, բնականաբար, չեն նշանակվել: Սուլթանովն «իշխանություն է ստացել» բրիտանական զինվորական ներկայացուցչությունից, գործել նրա, այլ ոչ թե «ԱԴՀ կառավարության» անունից:

«Ղարաբաղում որոշ ժամանակ երկիշխանություն է պահպանվել, որը խախտվել է Անդրանիկի ջոկատների ներխուժմամբ», գրում է Նովրուզ Մամեդովը: Ակնհայտ սուտ. ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը Լեռնային Ղարաբաղ չի մտել: Պետք է մտներ, բայց, հավատալով բրիտանական զինվորական ներկայացուցչության «ասպետական խոսքին», դադարեցրել է ռազմերթը: Ինչպես տեսնում ենք, այս անգամ էլ ոչ թե «ԱԴՀ կառավարությունը», այլ Արեւելյան Այսրկովկասում բրիտանական զինվորական ներկայացուցչությունն է եղել «բանակցող» կողմ: Իսկ ակնարկը, որ «Ղարաբաղում որոշ ժամանակ երկիշխանություն է պահպանվել», վկայությունն է իրողության, որ «ԱԴՀ կառավարությունը» երբեք ԼՂ հայ մեծամասնության նկատմամբ պետական իրավազորություն չի ունեցել:

Եվ բոլորովին խղճահարություն է հարուցում Նովրուզ Մամեդովի ճիգը, երբ նա վկայակոչում է Անաստաս Միկոյանի՝ Լենինին հղած նամակը: Ո՞վ էր Անաստաս Միկոյանը: Բոլշեւիկ գործիչ, որ, բնականաբար, Հայաստանի անկախության թիվ մեկ թշնամին էր: Եվ, իհարկե, պիտի «միջազգային իմպերիալիզմի գործակալ» երկրին մեղադրեր Լեռնային Ղարաբաղն «իրեն կցելու» համար:

Նովրուզ Մամեդովը հռետորական հարց է հնչեցնում. «Եթե Ղարաբաղն, ինչպես պնդում է Սարգսյանը, «չի մտել ԱԴՀ կազմի մեջ», ապա հայերն ի՞նչ կարիք ունեին ապստամբելու: Ինչպե՞ս կարող էին ղարաբաղյան քաղաքներում ԱԴՀ կայազորներ տեղաբաշխվել, եթե այդ պետությունը չէր վերահսկում Ղարաբաղը: Ինչո՞ւ է հայկական ազգային խորհուրդը ճանաչել ԱԴՀ իշխանությունը եւ նրա կառավարության հետ ստորագրել Ժամանակավոր Համաձայնագիր, եթե այդ պետությունը «մեկ օր իսկ չի վերահսկել Ղարաբաղը»»:

Այստեղ ամեն ինչ գլխիվայր շրջված է: Տպավորություն է ստեղծվում, թե «ԱԴՀ կայազորները ղարաբաղյան քաղաքներում տեղաբաշխվել են» նախքան Ազգային խորհուրդը «ԱԴՀ կառավարության հետ» կստորագրեր Ժամանակավոր համաձայնագիրը: Իրականում, սակայն, նախ այդ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ համաձայնագիրն է ստորագրվել: Եվ միայն Ազգային խորհրդի համաձայնությամբ է, որ «ԱԴՀ կառավարությանը» հնարավորություն է տրվել «տեղաբաշխել կայազորներ»: Այն եւս՝ ժամանակավորապես, քանի որ ընդհանուր համաձայնությունը կոչվել է ԺԱ- ՄԱ-ՆԱ-ԿԱ-ՎՈՐ:

Իսկ թե ինչո՞ւ են «հայերն ապստամբել»՝ Նովրուզ Մամեդովը քաջ գիտի: Դժգոհություն է հարուցել այն, որ բրիտանական զինվորական ներկայացուցչության ազդեցության թուլացմանը զուգահեռ «ԱԴՀ կառավարությունն» սկսել է ձեռնարկել ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԸ մշտական դարձնելուն ուղղված սադրիչ քայլեր: Այդ թվում, առաջին հերթին, Լեռնային Ղարաբաղում մեծացնելով զինված ուժերի թվաքանակը: Իսկ «ապստամբություն», որպես այդպիսին, չի եղել: «ԱԴՀ կառավարությունը», Մուստաֆա Քեմալից տեղեկացված լինելով, որ շուտով բոլշեւիկյան Ռուսաստանի 11-րդ բանակը մտնելու է Բաքու, եւ ինքն «իշխանությունը զիջելու է տեղական մուսուլմաններին», պարզապես կայացրել է Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Շուշին ավերելու, նրա հայ, շեշտում ենք, մեծամասնություն կազմող բնակչությունը սպանդի ենթարկելու որոշում, որի իրականացումը հանձնարարվել է «գեներալ-նահանգապետ» Սուլթանովին: Եվ վերջինս էլ կատարել է «կառավարության», իրականում՝ Մուստաֆա Քեմալի, թերեւս բոլշեւիկյան իշխանությունների հետ համաձայնեցրած, հանձնարարականը:

Որեւէ օրինական կառավարություն «ապստամբություն» ճնշելու համար մի ամբողջ քաղաքի եւ շրջակայքի բնակչություն գլխովին չի բնաջնջում: Իրեն հարգող կառավարությունն, ընդհակառակը, ձեռնարկում է միջոցներ, որպեսզի ապստամբների գործողություններից խաղաղ մարդիկ չտուժեն: «ԱԴՀ կառավարությունն», այնինչ, Շուշիի փողոցներում, ի տես մուսուլման խառնամբոխի, օրեր շարունակ պտտեցրել է Արցախի հոգեւոր առաջնորդի կտրած գլուխը: Իսկ այդ ամենից ոգեւորված՝ «ԱԴՀ կառավարական ուժերի զինվորն» իր եղբորը գրել է. «Այն հայկական Շուշին, որ դու ես տեսել, չկա: Բոլոր հարուստ մարդիկ, այդ թվում եւ խալիֆը (նկատի է ունեցել հոգեւոր առաջնորդ Վահան եպիսկոպոսին- Վ.Ա.) սպանվել են, տները՝ հրկիզվել: Թողնվել է միայն երեք տուն: Մերոնք այնքան ավար են վերցրել, որ սկսել են լկտիանալ»: Ահա այսպես է Շուշին «հինավուրց ադրբեջանական քաղաք» դարձել, եւ Նովրուզ Մամեդովը զուր է «պառաված օրիորդի» կասկածելի անմեղություն խաղում:

Ժամանակաշրջանի միակ իրավական փաստաթուղթը, որ միջազգային-միջպետական նշանակություն ունի, բոլշեւիկյան Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված զինադադարի համաձայնագիրն է, որով Լեռնային Ղարաբաղը ճանաչված է Ռուսաստանի կողմից օկուպացված տարածք, ինչը, սակայն, չէր կանխորոշում նրա պատկանելիությունը որեւէ, այդ թվում՝ երրորդ, երկրի: Հետեւելով Նովրուզ Մամեդովի «տրամաբանությանը» հարցնենք. «Եթե Լեռնային Ղարաբաղը մաս է կազմել ԱԴՀ-ին, ապա ինչո՞ւ պիտի ռուսական զորքերն այն օկուպացնեին: Ի՞նչն է բոլշեւիկներին ստիպել նման փաստաթուղթ ստորագրել «միջազգային իմպերիալիզմի գործակալ» Հայաստանի Հանրապետության հետ: Եվ, վերջապես, ինչո՞ւ է համաձայնագրում տեղ գտել օկուպացիայի փաստով ԼՂ կարգավիճակը չկանխորոշելու մասին ամենաէական դրույթը»: Նովրուզ Մամեդովը գիտի՞ այս հարցերի պատասխանը: Եթե այո՝ թող հնչեցնի www.twitter.com/ NovruzMamedovում: Խոստանում ենք հետեւել եւ ծանոթանալ:

Ուշադրություն եւ վերլուծական հայացք է հայցում ՌԿ/բ/Կ Կավբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշման՝ «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում» ձեւակերպումը: Ադրբեջանական կողմը սովորաբար դա համարում է «իրողության արձանագրում»: Այսինքն՝ «Լեռնային Ղարաբաղն ինչպես եղել, այնպես էլ թողնվել է Ադրբեջանի կազմում»: Նախընթաց ողջ շարադրանքը եւ բազմաթիվ այլ փաստեր վկայում են, որ՝ ոչ, Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում, իրոք ինչպես նախագահ Սերժ Սարգսյանն է ասել, մեկ օր անգամ չի գտնվել: Իսկ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ՝ վերը նշված համաձայնագիրն ուղղակի փաստում է, որ Լեռնային Ղարաբաղը Ռուսաստանի զինված ուժերի կողմից օկուպացվել է: Ե՞րբ է Ռուսաստանը դադարեցրել օկուպացիան: Իրավական իմաստով՝ երբեք: Հարցը կարող էր լուծում ստանալ միայն եւ միայն Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ, ներկա խոսքով ասած, «մեծ համաձայնագրով», որը, սակայն, կողմերի միջեւ ձեռք չի բերվել: Այսպիսով, Հայաստանի անկախ հանրապետության անկումից հետո էլ Լեռնային Ղարաբաղը մնացել է Ռուսաստանի կողմից օկուպացված, պատերազմի իրավունքով նրան պատկանող տարածք: Բոլշեւիկներն այն կարող էին «զիջել» Խորհրդային Հայաստանին, բայց «թողել են Ադրբեջանի կազմում»:

Ռուսերեն «оставить»-ը միայն «թողնել» չէ, որ նշանակում է: Այն նաեւ «հանձնելու», «զիջելու», նույնիսկ՝ «լքելու», «հետ քաշվելու» իմաստներ ունի: Օրինակ՝ «Я эту книгу оставляю вам»: Կամ, «наши войска оставили Киев». Ռուսներն «оставляют» այն, ինչ իրենց է պատկանում, բայց չեն ուզում, չեն կարողանում պահել: Այսինքն, այդպես ասելիս այդ լեզուն հիմնականում նշում է ինչ-որ բան զիջելու, նվիրելու իմաստ: Ադրբեջանցիներն ասում են, «ինչո՞ւ Կավբյուրոն չի օգտագործել «հանձնել» կամ «մտցնել» բառը, ինչո՞ւ չի գրել՝ «Լեռնային Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին» կամ «Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ»»: Շատ պարզ պատճառով: «Հանձնել» կարող էին միայն սուվերեն երկրի, իսկ Ադրբեջանն այդպիսին չէր, «մտցնել» չեն գրել, քանի որ դա էլ կնշանակեր, որ «Լեռնային Ղարաբաղն ինչ-որ տեղից վերցնում- մտցնում են ինչ-որ տեղ»: Կավբյուրոն «թողնել» գրելով շատ աներկմիտ հասկացրել է, որ Լեռնային Ղարաբաղը օկուպացիայի իրավունքով պատկանում է Ռուսաստանին, եւ նա իրեն պատկանածը «թողնում է Ադրբեջանի կազմում»: Բայց՝ ոչ թե որպես նրա նույնիսկ խորհրդային սուվերենությանը ենթակա, այլ՝ «մարզային լայն ինքնավարության» տարածք:

Եվ ինքնին հասկանալի է, որ այդ «թողնել»-ն իրավական ուժ ունեցել է այնքան, որքան գոյատեւել է այն ընդհանուր պետական համակարգը, որտեղ ՌԿ/բ/Կ Կավբյուրոյի որոշումն ընկալվել է իբրեւ իրավական ակտ: Այն երկիրը, որ հարգում էր Կավբյուրոյի որոշումն ու առաջնորդվում դրանով, Խորհրդային Միությունն էր: Որն, ի ցավ Նովրուզ Մամեդովի, ինքնալուծարվել է՝ Լեթայի գիրկը նետելով այն խորհրդային, սոցիալիստական հանրապետությունը, որի «կազմում էր թողնված» Լեռնային Ղարաբաղը: Այսօր հղում անել Անաստաս Միկոյանի՝ Լենինին հղած նամակին կամ նույնիսկ Կավբյուրոյի որոշմանը, նշանակում է լինել անուղղելի երազող: Կամ՝ մտագար:

Եվ, վերջապես. այսօրվա Ադրբեջանն ինքն է հրաժարվել Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից եւ ստանձնել «1918թ. մայիսի 28-ից մինչեւ 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդությունը»: Այդ դեպքում ինչո՞ւ իրավահաջորդ կառավարությունը փորձ չի արել թարմացնել իրավանախորդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի միջեւ ձեռք բերված ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ համաձայնությունը, որի մասին միայն այսօր է հիշում Նովրուզ Մամեդովը: Ինչո՞ւ: Պատասխանը մեկն է. որովհետեւ խնդիրը բանակցությունների միջոցով լուծելու ցանկություն չի ունեցել: Այլ որոշել է Սուլթանովի օրինակով «խռովության» մեջ մեղադրել ԼՂ հայ մեծամասնությանը եւ նրա հետ հաշիվները մաքրել այնպես, ինչպես Սուլթանովը՝ 1920թ. մարտի 23-ին՝ նովրուզի տոնը «ուրբագործելով» տասնյակ հազարավոր հայ մարդկանց արյամբ եւ արցունքներով: Այս անգամ, սակայն, դա չի ստացվել: Եվ Նովրուզ Մամեդովը զուր է մի նոր «արյունոտ նովրուզ» երազում: Դա չի լինելու: Ինչպես նաեւ անցած է «ժամանակավոր համաձայնագրի» ժամանակը: Միեւնույն ջրում երկու անգամ ոտք չեն դնում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Թուրք դասախոսները՝ պատմության կեղծարարնե՞ր...

Վերջերս Դիարբեքիրի DICLE համալսարանում Յըլմազ Փոլադ անունով ոմն զեկուցող «ճիշտ» կամ «սխալ» պատասխանի պահանջով ուսանողներին տվել է հարցեր 1-ին աշխարհամարտի ժամանակ իրականացված Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հարցերն այսպիսին էին. «Պատերազմի ժամանակ հայերի մի մասը արդյոք դասալիք դարձե՞լ է եւ անցել ռուսները կողմը», «Տեղահանված հայերն աքսորվելիս արդյոք փախուստի դիմե՞լ են եւ ապստամբել, թիկունքից խփելով թուրքերին» եւ այլն:

Թուրքիայի ներկայիս իշխանությունը ոչնչից չի խորշում, որպեսզի ցույց տա, թե Օսմանյան կայսրությունում պետականորեն որեւէ ցեղասպանություն չի իրականացվել, իսկ թուրքերը եւ հայերը սպանվել են պատերազմի հետեւանքով:

Մեկ ուրիշ օրինակ: Ստամբուլի վարժարաններից մեկում զինվորական պատրաստության դասի ժամանակ թուրք գնդապետ Սինան Օզը ցույց է տվել 1-ին աշխարհամարտի ժամանակ «հայերի սպանած» «թուրք» երեխաների լուսանկարներ:

Այն պահին, երբ հայերը նշում էին Մեծ եղեռնի 1,5 մլն զոհերի հիշատակի օրը, թուրքական իշխանությունների նախապատրաստած հիշյալ պնդումները միայն ատելության եւ վրեժխնդրության զգացումներ կարող էին առաջացնել թուրքերի եւ հայերի մեջ: Թուրքիայի սահմանադրության 301-րդ հոդվածը դատապարտում է թուրքական ինքնությունը վիրավորող յուրաքանչյուր անձնավորության: Իբրեւ չափավոր իսլամի եւ ժողովրդավարության երկիր ներկայացվող Թուրքիան ինչո՞ւ չի ընդունում օրենք, որը կդատապարտեր երկրի ոչ թուրք քաղաքացիներին վիրավորող անձանց: Հայոց ցեղասպանության ժխտման դեմ պայքարած բազմաթիվ թուրք խիզախ մտավորականներ դաժանորեն դատապարտվել են, բայց շարունակում են իրենց պայքարը: Մինչդեռ պետությունը թաքցնում է պատմությունը եւ մի ամբողջ դար անգիտության մեջ է պահում ժողովրդին:

Այդ երկրում միշտ կլինեն քոսոտ մոզիներ, որոնք պետության աջակցությամբ կշարունակեն պատմական ճշմարտության խեղաթյուրման կեղտոտ գործը: Թուրքական առածն ասում է. «Շունը չի հրաժարվի կղկղանք ուտելուց»: Բայց թուրքական մեկ ուրիշ առած էլ կա. «Ստախոսի վառած մոմը հանգչում է մայրամուտից քիչ անց»:

Դասախոսներն ու գնդապետները համարվում են թուրքական հասարակության ընտրախավը: Բայց նրանց ստահոդ դասավանդումը՝ վրեժխնդրության ոգի սերմանելով, կպատրաստի ապագա ոճրագործներ: Լրագրող Հրանտ Դինքի սպանությունը երկրում իշխող տվյալ մտայնության օրինակն է: Թուրքիայի հասարակության պատասխանատուները պետք է արժանապատվություն ունենան, որ երկիրը կարողանա մուտք գործել աշխարհի քաղաքակիրթ պետությունների ընտանիք:

**ՆԵՐՍԵՍ ԴՈՒՐՄԱՆ**
**Փարիզ**

# Նաթանյահու. «Պատրաստ ենք ցավագին փոխզիջումների»

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն, երեկ ԱՄՆ Կոնգրեսի զույգ պալատների առջեւ ելույթ ունենալով, հայտարարել է, որ իր երկիրը պատրաստ է «ցավագին փոխզիջումների» դիմել հանուն պաղեստինցիների հետ խաղաղության: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Նաթանյահուի խոսքերով, Իսրայելին խաղաղություն է պետք, եւ հանուն դրա հնարավոր է «շռայլություն» տարածքային զիջումների հարցում: Ապագայում կնքվելիք հաշտության ամեն մի համաձայնագիր «իսրայելական ավանների մի մասը կթողնի Իսրայելից դուրս», ավելացրել է նա:



Միեւնույն ժամանակ Նաթանյահուն հայտարարել է, որ Իսրայելը մտադիր է պահպանել ռազմական ներկայությունը Այսրհորդանանում եւ այդ տարածքի բոլոր հիմնական ավաններում, ինչպես նաեւ ամբողջ Երուսաղեմում:

Կոնգրեսի եւ Սենատի անդամները քանիցս հոտընկայս ծափահարություններով ընդհատել են Նաթանյահուի ելույթը: Մինչդեռ Պաղեստինյան ինքնավարության վարչակազմում նրա ելույթը քննադատել են: Վարչակազմի բարձրաստիճան անդամ Նաբիլ Շաաթը, օրինակ, Կոնգրեսում Նաթանյահուի ունեցած ելույթը անվանել է «պատերազմի հայտարարում պաղեստինցիներին»: Շաաթի խոսքերով, Իսրայելի վարչապետը մերժել է պաղեստինցիների բոլոր հիմնական պահանջները:

Ավելի վաղ՝ մայիսի 19-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Մերձավոր Արեւելքի իրադրությանը նվիրված իր ելույթում հայտարարել էր, որ Իսրայելի եւ Պաղեստինի ապագա պետության սահմանը «պետք է անցնի 1967-ի սահմանագծերով՝ տարածքների համաձայնեցված փոխանակմամբ»:

# BRIC5-ի երկրները կուզենային ԱՄՀ ղեկավարի պաշտոնում տեսնել ոչ-եվրոպացու

*Նյու Յորքում ԴՆԹ փորձաքննությունը չի ավարտվել*

**BRIC5 խմբի անդամ երկրները (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, ՀԱՀ) «մտահոգություն» են արտահայտել, որ ԵՄ ղեկավարները հրաժարվում են ոչ-եվրոպացու թեկնածություն քննության առնել ԱՄՀ գլխավոր տնօրենի թափուր պաշտոնի համար: BRIC5-ի երկրները համապատասխան հայտարարություն են տարածել, որի մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Խմբի անդամների կարծիքով, ԱՄՀ անդամ երկրների այն պայմանավորվածությունը, որ հիմնադրամի ղեկավարը պետք է լինի եվրոպացի, «չի համապատասխանում ԱՄՀ կանոններին ու սկզբունքներին»:**

**Վերջերս համանման հայտարարություն էր արել նաեւ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) գլխավոր քարտուղարը: ՏՀԶԿ-ն, որը հաճախ անվանում են «հարուստ երկրների ակումբ» միավորում է 34 ժողովրդավարական եւ զարգացած երկրներ, այդ թվում՝ ԵՄ անդամների մեծ մասը, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Հարավային Կորեան եւ Ավստրալիան:**

**ԱՄՀ նոր ղեկավարի ընտրության անհրաժեշտությունը ծագեց մայիսի 19-ին, երբ հրաժարական տվեց գլխավոր տնօրեն Դոմինիկ Ստրոս-Կանը, որն ամբաստանվում է Նյու Յորքի Sofitel հյուրանոցի 32-ամյա մի սպասավորուհու բռնաբարելու փորձի մեջ: Ի դեպ, երեկ առավոտյան բազմաթիվ ԶԼՄ-ներ ու դրանց արձագանքելով նաեւ մենք հաղորդել էինք, թե սպասավորուհու համազգեստի վրայի ԴՆԹ նմուշները համընկել են Ստրոս-Կանի տրամադրած ԴՆԹ նմուշներին: Սակայն ավելի ուշ Նյու Յորքի ոստիկանության պաշտոնական ներկայացուցիչները Ֆրանսպրեսի թղթակցին ասել էին, որ փորձաքննությունը դեռ չի ավարտվել, եւ վերջնական արդյունքները պատրաստ չեն: Ստրոս-Կանի գործով Նյու Յորքում դատական հաջորդ նիստը տեղի կունենա հունիսի 6-ին:**

**ԱՄՀ ղեկավարի պաշտոնի գլխավոր թեկնածուն Ֆրանսիայի ֆինանսների նախարար Քրիստին Լագարդն է («Ազգը» արդեն գրել է այդ մասին): Նրա թեկնածությունը պաշտպանում է Եվրամիությունը: ՏՀԶԿ երկրները թեեւ ԱՄՀ անդամ պետություններին կոչ էին արել ԱՄՀ ղեկավարի պաշտոնի համար քննության առնել ոչ-եվրոպացու թեկնածություն, ի վերջո հայտարարեցին, որ Լագարդին համարում են հիանալի թեկնածու:**




ՃԱՊՈՆԻԱ

# «Ֆուկուշիմա-1»-ի շրջակայքի աղտոտվածությունը համադրելի է Չեռնոբիլի հետ

**Ճապոնիայի ատոմային էներգիայի կառավարական հանձնաժողովի անցկացրած հետազոտությունները վկայում են, որ «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի մերձակա մի շարք շրջաններում ռադիոակտիվ նյութերով հողի աղտոտվածության մակարդակը համադրելի է Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարից հետո արձանագրված ցուցանիշների հետ:**

**Այդուհանդերձ որոշվել է նախքան տարհանված բնակիչների վերադարձը կատարել հողի ապաակտիվացման աշխատանքներ: Վարչապետ Նաոտո Կանի խոսքերով, տարհանված 85 հազար անձանց տունդարձի հարցը կլուծվի 2012-ից ոչ շուտ:**

**«Ֆիգարո» թերթի կայքը վկայակոչում է ֆրանսիացի փորձագետների հետազոտության տվյալները, որոնց համաձայն «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ի շրջակա տարածքներից հարկավոր է տարհանել եւս 70 հազար մարդու: ԱԷԿ-ի օպերատոր TEPCO ընկերությունը խոստովանել է, որ «Ֆուկուշիմա-1»-ում հալված են արդեն 3 ռեակտորների վառելիքաձողեր: Գլխավոր վտանգն այն է, որ նման վառելիքի մի մասը կարող է ռեակտորի իրանի միջով թափանցել հողի մեջ: Այդ դեպքում քայքայված էներգաբլոկների տակ կգոյանան մշտական ռադիոակտիվ աղտոտման օջախներ:**



**«600 քառ. կմ տարածքում ռադիոակտիվ ցեզիումով հողի աղտոտվածության ընդհանուր մակարդակը կազմում է 1 քառ. մետրի վրա 1,48 միլիոն բեկկերել, ինչը համեմատելի է չեռնոբիլյան ցուցանիշների հետ: Ամենից շատ տուժել են ԱԷԿ-ից հյուսիս-արեւմուտք ընկած շրջանները: Տվյալ տարածքներում 1 տարի ապրելը կհանգեցնի 5 միլիզիվերտ ճառագայթման, որը ցածր է Ճապոնիայի կառավարության հաստատած 20 միլիզիվերտ առավելագույն թույլատրելի սահմանից», նշվում է փորձագիտական եզրակացության մեջ:**

**Պ. Ք.**

# Գրիմսվոտնի ժայթքումը դադարել է

**Իսլանդական Գրիմսվոտն հրաբուխն այլեւս մոխրի ամպեր չի արտանետում. ժայթքումը ըստ երեւույթին դադարել է: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով բրիտանացի օդերեւութաբաններին: Եվրոպայի օդային տարածքում թռիչքներն աստիճանաբար վերսկսվում են: Երեկ գիշեր խառնարանից սկսել է գոլորշի դուրս գալ: Ժայթքումն ավարտվելու մասին պաշտոնապես պետք է հայտարարեն երկրաֆիզիկոսները:**

**Թռիչքների սահմանափակման հարցում առավել խիստ կանոններ կիրառող Գերմանիան չեղյալ էր հայտարարել մոտ 700 չվերթ: Երեկ հետմիջօրեին բացվել է օդային տարածքը Համբուրգի եւ ապա Բեռլինի վրա: Մեծ Բրիտանիայում որոշ չվերթեր դեռ չեն վերսկսվել: Միաժամանակ հաղորդվում է, որ հրաբխային մասնիկների ամպը աստիճանաբար հեռանում է երկրի օդային տարածքից: ՌԻԱ գործակալության տվյալներով, ամպը շարժվում է դեպի Սկանդինավյան թերակղզի, Հյուսիսային Գերմանիա, Լեհաստան, բալթյան երկրներ:**

# Մուբարաքին եւ որդիներին կդատեն կաշառակերության եւ սպանությունների համար



Եգիպտոսի գլխավոր դատախազը հայտարարել է, որ երկրի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքին ներկայացնում է կաշառակերության, իշխանության չարաշահման, պետական միջոցների շռայլման, ցուցարարների սպանությունների մեղադրանքներ: «Քոլ Իսրայել» ռադիոկայանը հաղորդում է, որ կաշառակերության մեղադրանքներ են ներկայացվում նաեւ Մուբարաքի երկու որդիներին՝ Գամալին եւ Ալաային:

Նույն գործի շրջանակներում մեղադրանքներ կներկայացվեն նաեւ երկրից փախած գործարար Հուսեյն Սալամին:

Միաժամանակ հայտնի է դարձել, որ Մուբարաքին բուժզննության ենթարկելուց հետո բժիշկները նրա վիճակը գնահատել են կայուն, բայց հարկ են համարել նրան որոշ ժամանակ պահել Շարմ աշ Շեյխի հիվանդանոցում: Նախկին նախագահին Կահիրե կտեղափոխեն պաշտպանված պայմանների ապահովման դեպքում, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Պաշտոնական հաղորդումներում առայժմ չի ասվում, թե դատախազությունն ինչպիսի պատիժ կպահանջի Մուբարաքի եւ նրա որդիների համար: Սակայն «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը նշում է, որ 20 ցուցարարի սպանության մեջ մեղավոր ճանաչված ոստիկանության սպաներից մեկը դատապարտվել է մահապատժի:

# «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը կմեկնարկի հուլիսի 10-ին

Արդեն ավանդական դարձած «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային 8-րդ փառատոնը, որը կմեկնարկի հուլիսի 10-12-ը, այս տարի իր շուրջն է համախմբելու 57 երկրներից ստացված 600 ֆիլմերի հայտեր ներկայացնողներին ու նաեւ կինոաշխարհում հայտնի դեմքերի: Եթե 1-ին կինոփառատոնին մասնակցել է 11 երկիր 122 ֆիլմով, ապա այս տարվա փառատոնին նման մասնակցությունը կրկին գալիս է փաստելու, որ երեւանյան «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնով հետաքրքրված են աշխարհի շատ կինոգործիչներ: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս փառատոնի մրցութային ծրագրերում ընդգրկված են խաղարկային, վավերագրական, հայկական համայնապատկեր անվանակարգերը: Հայկական համայնապատկեր մրցութային ծրագրում կներառվեն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում հայազգի կինոգործիչների կողմից ստեղծված լավագույն ֆիլմերը:

Երեկ ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**, «Ոսկե ծիրան» փառատոնի տնօրեն, կինոռեժիսոր **Հարություն Խաչատրյանը** եւ վեց տարի անընդմեջ փառատոնի գլխավոր հովանավոր, «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխ. տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** հանդիպեցին լրագրողների հետ: Նախարարը բարձր գնահատելով փառատոնի դերն ու նշանակությունը, ասաց, որ «Ոսկե ծիրան» փառատոնը սպասված է ողջ տարվա ընթացքում, իսկ հուլիս ամսին մեր քաղաքը կերպարանափոխվում է, աշխուժանում է փառատոնով, որն ամեն տարի նոր ծրագրերով է ներկայանում ու Հայաստանի հեղինակությունը կրկին բարձրանում է միջազգային արենայում: ««Ոսկե ծիրանը» զուտ կինոփառատոն չէ, այն իրականացնում է նաեւ կրթական, հետահայաց ցուցադրություններ եւ հոբելյանական միջոցառումներ, ժամանակակից ֆիլմերի ցուցադրություն եւ այլն: Այսինքն՝ փառատոնը չի շրջանցում ոչ մի կարեւորագույն իրադարձություն»: Այս տարի փառատոնն իր ծրագրում ընդգրկել է արտամրցութային ծրագիր՝ նվիրված ԱՊՀ-ի ստեղծման 20-ամյակին «ԱՊՀ երկրների կինոն» խորագրով: Իսկ Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված ծրագրում կցուցադրվեն վերջին 20 տարիներին նկարահանված հայկական վավերագրական ֆիլմեր, կներկայացվեն Հայաստանի եւ հայերի մասին օտարերկրյա կինոգործիչների նկարահանած ֆիլմեր: Ինչպես տեղեկացրեց Հարություն Խաչատրյանը, փառատոնի ծրագրում տեղ են գտել իտալական դասական եւ ժամանակակից ֆիլմեր, որոնք նվիրվում են Իտալիայի միավորման 150-ամյակին: Առանձնակի անդրադարձ կլինի նաեւ հայազգի ակնառու կինոգործիչներ՝ Ռոման Բալայանի-70-րդ, Էդմոնդ Քյոսայանի-75-րդ եւ Դմիտրի Կեսայանցի-80-րդ հոբելյաններին: 8-րդ փառատոնին ավելացել է եւս մեկ՝ «Կորիզ» խորագրով կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի միջազգային մրցույթը, որով փառատոնը հնարավորություն է ընձեռել երիտասարդներին իրենց տեսակետները ներկայացնել վաղվա կինոյի հանդեպ: Փառատոնի մշտական հետաքրքրությունների տիրույթում են նաեւ ուսումնական ծրագրերը: Վերջին տարիներին ստեղծված «Ոսկե ծիրան» բարձրագույն կինոդպրոցի շրջանակներում անց են կացվում վարպետության դասեր, համատեղ ֆիլմեր նկարահանվում: Հենց այդպիսիք այս տարի փառատոնին կներկայացվեն Անջեյ Վայդայի դպրոցի (Լեհաստան), Սամիր Քոլեջի (Իսրայել), Ռուսաստանի կինոյի պետական ինստիտուտի (ԹԲԼԽ) ուսանողական ֆիլմերը:



Պրն Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց նախարարին մշտական պետական աջակցության համար, իսկ Ռալֆ Յիրիկյանին՝ հովանավորչական գործունեության, ու նրանց նվիրեց «Ալեքսանդր Մանթաշյանց» գրքի առաջին օրինակները: Իսկ այդ գրքի շնորհանդեսը կկայանա փառատոնի ընթացքում:

«**Ազգի**» հարցերին պատասխանելով, պրն Խաչատրյանը տեղեկացրեց, որ մինչեւ փառատոնի մեկնարկը, «Մոսկվա» կինոթատրոնի մուտքի մոտ անցած տարի բացված ջրու անվանի անձանց աստղաքարերը Երեւանի ոսկու գործարանի մասնագետների կողմից վերանորոգված կտեղադրվեն այնպես ամուր, որ այլեւս հնարավոր չլինի գողանալ: Իսկ Աբովյան փողոցում կբացվի քանդակագործ Տիգրան Արզումանյանի «Ալեքսանդր Մանթաշյանց» արձանը: Սակայն հարցերի հարցը կրկին մնում է կինոդահլիճների չլուծվող խնդիրը: Չնայած որ քաղաքապետի հետ այդ հարցի շուրջը քննարկումներ եղել են, սակայն հարցը վերջնական լուծում չի ստացել: Իսկ 600 ֆիլմերը կցուցադրվեն «Մոսկվա», «Նաիրի» (դրսից հրավիրված հատուկ մասնագետները վերանորոգել են կինոսրահը), Թումանյանի անվան տիկնիկային թատրոններում, «Նարեկացի» արվեստի կենտրոնում եւ Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճներում: Իսկ թե որ ռեժիսորի որ ֆիլմով կմեկնարկի փառատոնը՝ կազմակերպիչներն առայժմ փակագծերը չբացեցին եւ խնդրեցին համբերությամբ սպասել հաջորդ ասուլիսին:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Գրիգոր Սաքամեան. «Մենք ասանկ ենք...»

Դարձեալ **Գրիգոր Սաքամեանն** է իր խնդումի երեկոյով եկած այս ափերը, ըլլալու իր հարազատ ունկնդիրներուն հետ եւ հրամցնելու նոր յայտագիր մը: Հարազատ կ'ըսենք, որովհետեւ Գրիգոր Սաքամեանի թատերական կեանքը Ամերիկայի մէջ սկսաւ Նիւ Եորքով եւ ուր կազմեց իր թատերախումբը եւ իր դերասանական հմայքով մուտք գործեց ազգային մշակութային մեր կեանքէն ներս, շուրջ 35 տարի առաջ:



Քանի մը տարին անգամ մը նոր յայտագիրով ան կը ներկայանայ ամերիկահայութեան: Կարծէք իր երկրպագուները կը սպասեն խնդումի իր մենակատարութեամբ ելոյթներուն: Թէեւ ան հաստատուած է Լոս Անճելըս, սակայն անոր այս յայտագիրները ունին լայն ժողովրդականութիւն՝ սկսած Նիւ Եորքէն մինչեւ Մոնթրէալ, Պոստոն... ու այս տարի Տիթրոյթ:

Մայիս 21-ին, Նիւ Եորքի Թէքէեան մշակութային միութիւնը, ըստ աւանդութեան, այս տարի եւս յանձն առաւ կազմակերպել այս նոր յայտագիրը՝ «Մենք ասանկ ենք...»ը: Նիւ Եորքի թէքէեանականներուն համար Գրիգորը սիրելի է, մանաւա՛նդ որ անոր թատերախումբի անդամներէն շատերը անցած են Սաքամեանի թատերական դպրոցէն եւ պահած մնայուն բարեկամական կապը անոր հետ: Անցեալ տարուան աշնան ալ մասնաճիւղը եղաւ առաջինը, որ նշեց սիրուած դերասանին ու տաղանդաւոր բեմադրիչին թատերական գործունէութեան յիսնամեակը, մեծ շուքով:

Հայկական եկեղեցիներու սրահները նեղ պիտի գային Սաքամեանի այս խնդումի երեկոյեան համար եւ անոր համար ալ վարչութիւնը ստիպուած եղաւ վարձել Թենըֆլայի յոյն օրթոտոքս եկեղեցւոյ մարզասրահը, որպէսզի կարենար ընդունիլ 400-ի հասնող հրաւիրեալները: Սրահը գեղեցկօրէն, գարնանային մթնոլորտով զարդարուած, արդէն հաճելի մթնոլորտ մը կը ներկայացնէր:

ԹՄՄ «Միհր Մկրտչեան» թատերախումբի վարչութեան փոխ ատենապետ **Յարութ Չաքմաճեան** կատարեց բացումը եւ ներկայացուց հայ բեմի վարպետը՝ Գրիգոր Սաքամեանը:

Այս յայտագրով Գրիգոր կը ներկայացնէր մեր երէկի մայր գաղութներու բարքերը, նիստուկացը, սովորութիւնները, այսպէս կոչուած «էրիկ-կնիկ»ի յարաբերութիւնները, եւ այս բոլորը մանաւանդ Լոս Անճելըս բերուած պատկերը, աւելցնելով հայաստանցի հայերուն հետ շփումը: Բոլորովին նոր յայտագիր մը, աւելի քան 200 տարբեր պատկերներով ներկայացուած, մաքուր եւ անխառն հայերէնով, հայաշունչ մթնոլորտ մը կը ստեղծէին լեցուն սրահէն ներս: Երիտասարդներու եւ պատանիներու թիւը կը գերազանցէր այս տարի, ինչ որ ցոյց կու տայ Սաքամեանի ժողովրդականութիւնը ոչ միայն Միջին Արեւելքէն գաղթած սերունդի մօտ, այլեւ՝ հոս ծնածներուն:

Ներկայ էին նաեւ Սաքամեանի երբեմնի դասընկերները Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն եւ ընկերները ՀԵԸ-ի Զարեհ Նուպար ակումբէն: Ելոյթէն առաջ ու վերջ բոլորուած Գրիգորին շուրջ, բարեկամներ, անցեալի կարօտով, կը հաւաքուէին երկար ժամանակ:

Անակնկալ եղաւ նաեւ նշել Գրիգորին ծննդեան տարեդարձը, որ կը զուգադիպէր այս օրերուն (մայիս 25):

Սաքամեան կը մնայ Միացեալ Նահանգներու հայ ամենէն ժողովրդական դերասանը եւ ան ունի մասնաւոր տեղ մը բոլորին սրտին մէջ:

Տնտեսական եւ քաղաքական տագնապի այս օրերուն մարդիկ պէ՛տք ունէին այս զուարթ պահին:

**ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ**
**Նիւ Եորք**

# Հայ բարեգործ Միքայել Արամյանցին նվիրված գրքի շնորհանդես

«Լոռու ձոր» հայրենակցական միություն ՀԿ-ի նախաձեռնությամբ 2011 թվականի մայիսի 28-ին ժամը 15:00-ին «Արարատ հոլ» ռեստորանում (Եզնիկ Կողբացի 30) կկայանա պատմաբան Վահե Անթանեսյանի «Միքայել Արամյանց» գրքի շնորհանդեսը՝ նվիրված 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի հայ ամենամեծ գործարար-բարեգործներից մեկին՝ Միքայել Արամյանցին: Շնորհանդեսին հրավիրված են մի շարք մտավորականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ գրողներ, այդ թվում՝ Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն Անելկա Գրիգորյանը, Հայաստանի Ազգային Արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը եւ այլք:

Միջոցառումը կուղեկցվի ֆուրշետով, ինչը հնարավորություն կտա ավելի մտերմիկ միջավայրում քննարկել գիրքն ու զրուցել հեղինակի հետ:

Միքայել Արամյանցը 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի հայ ամենամեծ գործարար-բարեգործներից է: Նրան են պատկանել Կովկասի ամենաշքեղ, գեղեցիկ շինությունները, այդ թվում՝ «Մաժեստիկը» (այսօրվա «Մարիոթ Թբիլիսին»): 1910 թվականին Թիֆլիսում նա կառուցեց Արամյանցի հիվանդանոցը, ուր բուժումն ու բուժպաշարկումը բացառապես անվճար էր, ստեղծեց Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերությունը, որի հիմքի վրա այսօր ունենք Հայաստանի պատմության պետական թանգարանը: Նա Բաքվի ամենահարուստ նավթատերերից էր: Սակայն այս մեծ հայորդին ծակատագրի բերումով մահացավ թշվառության մեջ: Այսօր Արամյանցի հսկայական կարողությունից հայ ազգին մնացել է ընդամենը Ախթալայում գտնվող նրա հրաշակերտ դղյակը:

# Կայացել է Լոս Անջելեսի Ֆիլհարմոնիկ նվագախմբի հոբելյանական պարահանդեսը

Լոս Անջելեսում կայացել է Լոս Անջելեսի Ֆիլհարմոնիկ նվագախմբի հոբելյանական՝ 60-րդ պարահանդեսը, որը կազմակերպվում է նվագախմբի միջազգային հանձնախմբի ուժերով:

Այդ հանձնախմբում ընդգրկված են երաժշտասեր հասարակության ներկայացուցիչներ եւ Լոս Անջելեսում հավատարմագրված դիվանագետների կանայք:

Այս անգամ Լոս Անջելեսի Ֆիլհարմոնիկի պարահանդեսն անցկացվել է ՀՀ հովանու ներքո եւ նվիրվել ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին՝ Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության նախաձեռնությամբ, Los Angeles Times թերթի տեղեկատվական հովանավորությամբ եւ Արմավիա ընկերության աջակցությամբ:

Պարահանդեսի ընթացքում ներկայացվել է հայկական դասական երաժշտություն՝ Ա. Խաչատրյանի, Տ. Չուխաջյանի, Ա. Տիգրանյանի ստեղծագործություններից, հայկական ազգային պարարվեստ՝ Վարդան եւ Սիրանույշ Գեւորգյաններ պարային ստուդիայի սաների կողմից եւ հայկական ժամանակակից ջազային երաժշտություն՝ Արթո Թունջբոյաջյանի կատարմամբ:

Ցուցադրվել է Հայաստանի մշակութային, պատմական կոթողներն ու տուրիստական վայրերը ներկայացնող ֆիլմ:

Հատուկ պարահանդեսին մասնակցելու նպատակով Լոս Անջելես է ժամանել Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայի բարիտոն Վլադիմիր Չեռնովը, որը կատարել է Յան Քրուգի «4 նոկտյուրնը»՝ գրված Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի եւ Գ. Մահարու ստեղծագործությունների հիման վրա:

«Հպարտ ենք ներկայացված լինել այս իրապես բարձրաճաշակ երեկոյին, որը բազմամշակութային քաղաքի խոշորագույն իրադարձություններից մեկն է: «Հավերժության մեղեդի» խորագիրը, որով այսօր ներկայացված է հայկական երաժշտությունը, արտացոլում է մեր ինքնությունն ու հազարամյա մշակույթը: Հուսով ենք՝ պարահանդեսը լոսանջելեսցիներին հնարավորություն կընձեռի առավել լավ ճանաչել Հայաստանն ու հայ մշակույթը», նշել է Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս **Գրիգոր Հովհաննիսյանը**:

Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված պարահանդեսը ողջունել է նաեւ Լոս Անջելեսի Ֆիլհարմոնիկի ղեկավար՝ աշխարհահռչակ **Գուստավո Դուդամելը**: Նա ընդգծել է, որ մշակութային այս միջոցառման հասույթը կուղղվի կրթական ծրագրերի իրականացմանը:

Պարահանդեսին մասնակցել են ավելի քան 400 երաժշտասերներ, այդ թվում՝ տասնյակ երկրների դիվանագետներ:

Լոս Անջելեսի Ֆիլհարմոնիկ նվագախմբի պարահանդեսի ընթացքում հայտարարվել է Լոս Անջելեսում ՀՀ անկախության 20 ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը:

# Գրիգոր Հարությունյանի ֆիլմը Մոսկվայում

Մոսկվայում անցկացվող հայկական ֆիլմերի փառատոնի շրջանակներում «Ռոլան» կինոթատրոնում ցուցադրվել է Գրիգոր Հարությունյանի «Լինելիություն» ֆիլմը, որը նվիրված է Հայաստանի անկախացմանը, քաղաքական պայքարին եւ ղարաբաղյան շարժմանը:

Ֆիլմի առանձնահատկությունն այն է, որ գլխավոր հերոսը ժողովուրդն է, տեքստ չկա. այն փոխարինված է երաժշտական շարքով, որն արտացոլում է հիշյալ ժամանակի բոլոր տրամադրությունները եւ իրավիճակը:

Հեղինակի գլխավոր նպատակն է հանդիսականին հասցնել այն գաղափարը, որ չնայած երկրաշարժին եւ մյուս բոլոր դժվարություններին, պատերազմին եւ շրջափակմանը, Հայաստանը շարժվում է դեպի իր լինելիությունը:

Լեփ-լեցուն դահլիճում կային քաղաքական գործիչներ, գործարար աշխարհի, մշակույթի ներկայացուցիչներ, երիտասարդներ: Ֆիլմի ավարտից հետո հանդիսականները հանդիպում ունեցան բեմադրիչի հետ:

Փառատոնը կազմակերպել են ՀՀ մշակույթի նախարարությունը, Ռուսաստանի հայերի միությունը, ՀՀ կինեմատոգրաֆիստների միությունը, ՌԴ-ում ՀՀ դեսպանատունը, Ռուսաստանի հայուհիների միությունը, ինչպես նաեւ «Տաշիր» ընկերությունը եւ «Պարադիզ» կինոընկերությունը:

**Պ.Ք.**

# Ուժերի ստուգատես աշխարհի առաջնությունից առաջ

*Բայդարկաներով մրցումներում ուժեղագույնը Վլադիմիր Ալավերդյանն էր, կանոեներով՝ հրազդանցի մարզիկները*

Երեւանյան լճում ավարտվեց բայդարկաներով եւ կանոեներով թիավարության Հայաստանի պատանեկան առաջնությունը: Պարգեւները վիճարկեցին Երեւանի, Էջմիածնի Ապագա գյուղի, Սեւանի եւ Հրազդանի մոտ 75 թիավարներ:



Ինչպես տեղեկացրեց Հայաստանի թիավարության հավաքականի գլխավոր մարզիչ, ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Հարություն Գասպարյանը, ընդհանուր առմամբ մարզիկների ներկայիս արդյունքներն այս ժամանակահատվածի համար կարելի է բավարար համարել, հաշվի առնելով, որ այս մրցումներն առաջինն էին ընթացիկ մրցաշրջանում:

Մեկտեղանոց բայդարկաներով մրցումներում իր հավասարը չուներ երեւանցի Վլադիմիր Ալավերդյանը, որը լավագույնն էր 200, 500 եւ 1000 մետր մրցատարածություններում: Մարզիչ Մարտիրոս Շահվալադյանի սանն ընկերակցելով Դավիթ Հարությունյանի հետ, բոլոր 3 մրցատարածություններում էլ առաջին տեղը գրավեց երկտեղանոց բայդարկաների մրցումներում:

Նշված երկու մարզիկները Ռազմիկ Գեւորգյանի եւ Ռոման Պալասյանի հետ հաղթող ճանաչվեցին 4 տեղանոց բայդարկաներով 1000 մետր մրցատարածությունում: Լավ տպավորություն թողեց նաեւ Հարություն Գասպարյանի որդին՝ Հայկը, որը մեկտեղանոց բայդարկաներով մրցումներում 3 մրցատարածություններում էլ զբաղեցրեց 2-րդ տեղը: Նշված բոլոր մարզիկներն էլ Երեւանի թիավարության մարզաձեւերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի սաներն են, որոնց մարզում է Մարտիրոս Շահվալադյանը:

Բացի երեւանցիներից, մրցանակակիրներ դարձան նաեւ մարզերից ժամանած մարզիկները: Սեւանի ներկայացուցիչ Նարեկ Խաչատրյանը 3-րդ տեղը գրավեց 500 եւ 1000 մետր մեկտեղանոց բայդարկաներով մրցումներում: Իսկ Էջմիածնի Ապագա գյուղի ներկայացուցիչները 4 տեղանոց բայդարկաներով 1000 մետր մրցատարածությունում ցույց տվեցին 3-րդ արդյունքը:

Կանոեներով մրցումներում մրցակիցներին գերազանցեցին հրազդանցի թիավարները: Գարիկ Բաբայանը լավագույնն էր 200 եւ 1000 մետր մրցատարածությունում մեկտեղանոց բայդարկաներով մրցումներում: Իսկ 500 մետրում հաղթող ճանաչվեց նրա եղբայրը՝ Էդգար Բաբայանը:

Երկտեղանոց կանոեների մրցավեճում ուժեղագույնը ճանաչվեց Մաքսիմ Խաչատրյան-Դավիթ Գրիգորյան զույգը՝ լավագույն արդյունքը ցույց տալով 200 եւ 500 մետր մրցատարածություններում: Իսկ 1000 մետր մրցատարածությունում լավագույնը Էդգար Բաբայան-Դավիթ Գրիգորյան երկյակն էր: Նրանց մարզում են հայր եւ որդի Շահեն եւ Կոլյա Պետրոսյանները:

Կանոեներով մրցումներում հանդես եկավ 6 թիավարուհի, ինչն ուրախալի փաստ է: Մեկտեղանոց կանոեներով մրցումներում 200 եւ 500 մետր մրցատարածություններում հաղթեց Անի Նավասարդյանը, որին մարզում է Ռաֆիկ Դանոյանը:

Հուլիսին Երեւանյան լճում կանցկացվի թիավարության հանրապետության մեծահասակների առաջնությունը: Իսկ ավարտված մրցումները հնարավորություն տվեցին ստուգելու թիավարների պատրաստվածությունը եւ կազմավորելու Հայաստանի պատանեկան հավաքականը, որը կնախապատրաստվի ամռանը Գերմանիայում կայանալիք թիավարության աշխարհի պատանեկան առաջնությանը: Մինչ այդ մեր թիավարները հունիսին Վրաստանում կմասնակցեն այդ երկրի բաց առաջնությանը: Ի դեպ, անցյալ տարի Վրաստանում Վլադիմիր Ալավերդյանն ու Հայկ Գասպարյանը հաղթող են ճանաչվել:

# Նադալի դժվարին հաղթանակը

Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ Ռաֆայել Նադալը մեծ դժվարությամբ հաղթահարեց ամերիկացի Ջոն Իսների դիմադրությունը: 2-րդ փուլի ուղեգիր նվաճելու համար Նադալը «Ռոլան Գարոսի» մրցաշարերում առաջին անգամ ստիպված էր 5 խաղափուլ անցկացնել (6-4, 6-7, 6-7, 6-2, 6-4): 2005-ին նորամուտը նշելով «Ռոլան Գարոսում», Նադալը 4 տարի շարունակ նվաճել է գլխավոր մրցանակը, իսկ 5-րդ տիտղոսին արժանացել է անցյալ տարի:



Նշենք, որ Ջոն Իսները թենիսի պատմության մեջ յուրօրինակ ռեկորդի հեղինակ է: Անցյալ տարի Ուիմբլդոնի մրցաշարում նա Նիկոլյա Մայայի հետ ընդհանուր առմամբ կորտում անցկացրեց 11 ժամ 5 րոպե, իսկ 5-րդ խաղափուլի հաշիվը 70-68 էր: Այդ խաղը տեւեց 3 օր:

Ցավոք, վնասվածքի պատճառով մրցաշարին չի մասնակցում Դավիթ Նալբանդյանը: Առաջին փուլը հաջողությամբ հաղթահարեց Նադալի գլխավոր հակառակորդ Ռոջեր Ֆեդերերը՝ առավելության հասնելով Ֆելիսիանո Լոպեսի նկատմամբ (6-3, 6-4, 7-6):

# Աբրամովիչը հրաժարվեց Անչելոտիի ծառայություններից

Անգլիայի առաջնության ավարտական տուրում «Էվերտոնին» 0-1 հաշվով զիջելուց հետո «Չելսիի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին պաշտոնանկ արվեց: Ակումբի պաշտոնական կայքը հետեւյալ հայտարարությունը զետեղեց. «Ակումբի ղեկավարությունը տեղեկացնում է, որ Կառլո Անչելոտին հեռանում է «Չելսիից»: Ակումբի սեփականատերն ու վարչությունը ցանկանում են իրենց շնորհակալությունը հայտնել Կառլոյին կատարած աշխատանքի եւ նվաճումների համար: Նա 2009-ի հուլիսից էր գլխավորում թիմը, որի օրոք «Չելսին» կրկնակի հաջողության էր հասել: Սակայն ընթացիկ մրցաշրջանում թիմի ելույթները չարդարացրին սպասելիքները, ուստի ժամանակն է մարզչական շտաբում փոփոխություններ կատարել: Անչելոտիին մշտապես ուրախ կլինենք տեսնելու «Ստեմֆորդ Բրիջ» մարզադաշտում: Իսկ ներկայումս ակումբը նոր գլխավոր մարզիչ պետք է գտնի»:

«Հարգում եմ «Չելսիի» ղեկավարության որոշումը: Երկու ֆանտաստիկ մրցաշրջան անցկացրի թիմում: Կարծում եմ, որ լավ կատարեցի աշխատանքս: Այժմ պետք է մտածեմ ապագայի մասին: Շատ կցանկանայի աշխատել պրեմիեր լիգայի թիմերից մեկում», հայտարարել է Անչելոտին:

Նշենք, որ Անգլիայի պրեմիեր լիգայում «Չելսին» 71 միավորով գրավեց 2-րդ տեղը՝ 9 միավորով հետ մնալով երկրի չեմպիոն «Մանչեսթր Յունայթեդից», որին զիջել էր նաեւ չեմպիոնների լիգայում:

Բրիտանական մամուլում արդեն քննարկումներ են սկսել, թե ով կգլխավորի «Չելսին»: Առաջին հերթին նշվում է Գուս Հիդինգը, որը ժամանակին գլխավորել է «Չելսին» մինչեւ Անչելոտին: Ըստ The Sun-ի, Հիդինգի գործերը Թուրքիայի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում անհաջող են ընթանում եւ Ռոման Աբրամովիչը պատրաստ է թուրքական կողմի հետ լուծել բոլոր հարցերը: Մյուս թեկնածուն «Պորտուի» գլխավոր մարզիչ Անդրե Վիլաշ-Բոաշն է, որի գլխավորությամբ պորտուգալական ակումբն ընթացիկ մրցաշրջանում յուրօրինակ հեթ տրիկի հեղինակ դարձավ՝ նվաճելով երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները, արժանանալով Եվրոպայի լիգայի հաղթողի կոչմանը: Խոսակցություններ կան, որ Ժոզե Մոուրինյուն կարող է վերադառնալ «Չելսի», ինչն իրատեսական չէ: Նշվում են նաեւ Գարի Ռեդնապի, Ֆրանկ Ռայկարդի, Մարկո վան Բաստենի ու Ջանֆրանկո Զոլայի անունները:

ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՈՒՄ

# Հարցը լուծվեց ՀՖՖ նախագահի միջնորդությամբ

**Ինչպես տեղեկացրել էինք, կարգապահական կոմիտեի որոշմամբ «Գանձասարը» սեփական հարկի տակ կայանալիք առաջիկա 5 հանդիպումները պետք է անցկացներ առանց հանդիսականների: Այդ որոշումը հարուցել էր «Գանձասարի» ղեկավարության խիստ դժգոհությունը, որը սպառնացել էր թիմը հանել առաջնությունից:**

**Ստեղծված իրավիճակում գովելի նախաձեռնություն դրսեւորեց ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը, որն անձամբ մեկնեց Կապան եւ հանդիպեց «Գանձասարի» ղեկավարության ու ֆուտբոլիստների հետ: Ռուբեն Հայրապետյանը հանդիպման ավարտին հայտարարել է, որ «Գանձասարի» խաղադաշտի որակազրկումը կլինի պայմանական, ուստի թիմի հանդիպումներին կարող են ներկա գտնվել ֆուտբոլասերները: Նա նաեւ զգուշացրել է, որ եթե Կապանի մարզադաշտում պատշաճ կարգուկանոն չլինի ու ֆուտբոլասերները կրկին իրենց անվայելուչ վարքագծով աչքի ընկնեն, ապա նախկին որակազրկումն ուժի մեջ կմտնի:**

# Երկու մրցանակակիր

**Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականի Ռուսաստանում բնակվող թեկնածուները մասնակցեցին Դաղստանի Կասպիյսկ քաղաքում անցկացված աշխարհի հնգակի չեմպիոն Ալի Ալիեւի միջազգային 42-րդ հուշամրցաշարին: Բացի Հայաստանի հավաքականից, մրցաշարին մասնակցեցին նաեւ Թուրքիայի, Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Ռուսաստանի եւ Դաղստանի հավաքականների 130 մարզիկներ:**

**Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդադյանի գլխավորությամբ մրցագորգ դուրս եկան 5 ըմբիշներ՝ Աշոտ Տերտերյանը (60 կգ), Դավիթ Սաֆարյանը (66 կգ), 2011-ի Եվրոպայի փոխչեմպիոն Մուսա Մուրթազալիեւը (74 կգ), Հաջիմուրադ Նուրմոգամեդովը (84 կգ) եւ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը: Այս հնգյակից առավել հաջող հանդես եկան Մուսա Մուրթազալիեւն ու Հաջիմուրադ Նուրմոգամեդովը, որոնք արժանացան բրոնզե մեդալի: Հետաքրքրական է, որ արդեն 2-րդ տարին Մուրթազալիեւը հուշամրցաշարում պարտվում է իր եղբորը՝ Դաղստանը ներկայացնող աշխարհի կրկնակի չեմպիոն Մալխազին, որը կրկին ուժեղագույնն էր մինչեւ 74 կգ քաշայինների մրցավեճում:**

# Հայկանուշ Բեգլարյանը նոր ռեկորդ սահմանեց

**Արտաշատում անցկացված թեթեւ ատլետիկայի Գառնիկ Ղուկասյանի հուշամրցաշարում հիանալի ելույթ ունեցավ Հայկանուշ Բեգլարյանը, որը եռացատկում ցույց տվեց 13 մետր 15 սմ արդյունք, ինչը հանրապետության կանանց նոր ռեկորդ է: Տղամարդկանց մրցումներում լավագույնը Լեւոն Աղասյանն էր, որը եռացատկում ցույց տվեց 15,68 մ արդյունք:**

**Շուտով հայ թեթեւատլետները կմասնակցեն հունիսի 18-19-ը Ռեյկյավիկում կայանալիք թեթեւ ատլետիկայի Եվրոպայի թիմային առաջնությանը: Մեր թիմն ընդգրկված է 3-րդ խմբում: Այդ մրցումներին մեր թիմի կազմում կմասնակցի 20 մարզիկ: Մրցումների նախապատրաստական փուլը կանցկացվի Ծաղկաձորում:**

**Նշենք, որ Հայկանուշ Բեգլարյանը կմասնակցի մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի երիտասարդական առաջնությանը, իսկ Լեւոն Աղասյանը Հայաստանը կներկայացնի հուլիսին Ֆրանսիայում կայանալիք աշխարհի պատանեկան առաջնությունում:**

# Միրումյանը շարունակեց հաղթարշավը

**Չեխիայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում հաղթարշավն է շարունակում Վիգեն Միրումյանը: 4-րդ տուրում նա սեւերով հաղթեց Յացեկ Օրզեխովսկուն՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Հայ շախմատիստը 4 միավորով Արթուր Ջակուբիեցի եւ Վիկտոր Դմիտրենկոյի հետ գլխավորում է աղյուսակը: Ջակուբիեցը հաղթեց Իգոր Գազիկին, իսկ Դմիտրենկոն պարտության մատնեց Ստանիսլավ Կոլարին: 5-րդ տուրում Միրումյանը սպիտակներով կմրցի Ջակուբիեցի հետ:**

# Գարի Նեւիլը հրաժեշտ տվեց ֆուտբոլին

**Անգլիական ֆուտբոլի անվանի վետերաններից մեկը՝ Գարի Նեւիլը հրաժեշտ տվեց ֆուտբոլին: Նրա պատվին հարազատ ակումբը՝ «Մանչեսթր Յունայթեդը» «Օլդ Տրաֆորդ» մարզադաշտում ընկերական մրցախաղ անցկացրեց Թուրինի «Յուվենտուսի» հետ: Հաշիվը 18-րդ րոպեին բացեց Ուեյն Ռունին, որին իտալացիները պատասխանեցին Պեպեի ու Ջանդոնատոյի խփած գոլերով, որոնց շնորհիվ «Յուվենտուսը» հաղթեց:**



**36-ամյա Գարի Նեւիլը 19 մրցաշրջան հանդես է եկել «Մանչեսթր Յունայթեդում»՝ անցկացնելով 600-ից ավելի խաղ: Նրա հրաժեշտի հանդիպմանը Լոս Անջելեսից եկել էր Դեւիդ Բեքհեմը, որն իր նախկին խաղընկերների հետ հարգանքի տուրք մատուցեց Նեւիլին:**

# Գելֆանդը կվիճարկի շախմատային թագն Անանդի հետ

Երեկ Կազանում կայացավ շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների եզրափակիչ մրցախաղի վերջին՝ 6-րդ պարտիան: Իսրայելցի գրոսմայստեր Բորիս Գելֆանդին հաջողվեց սպիտակներով 35-րդ քայլին հաղթանակ տոնել Ալեքսանդր Գրիշչուկի նկատմամբ: Այսպիսով, 3,5-2,5 հաշվով շահելով մրցախաղը, Բորիս Գելֆանդը դարձավ 8 ուժեղագույն գրոսմայստերների միջեւ Կազանում անցկացված հավակնորդների մրցաշարի հաղթող: Նա իրավունք ստացավ շախմատային թագը վիճարկելու աշխարհի ներկայիս չեմպիոն, հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդի հետ: Այդ մրցախաղը նախատեսված է հաջորդ տարվա սկզբին՝ Լոնդոնում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Բուրմունքն ըստ Ֆրենսիս Քյուրքչյանի

***Օծանելիքների պատրաստման մասնագետ Ֆրենսիս Քյուրքչյանի առաջին լուրջ հաջողությունն այդ բնագավառում 1995-ին «Le Mâle» բուրմունքը պատրաստելն էր Ժան-Պոլ Գոլտիեի համար: Օծանելիքների արդյունաբերության մեջ արդեն իսկ ճանաչված «հոտառությունն» ունեցողը 2009-ին Ֆրանսիայի մշակույթի նախարարության կողմից արժանացել է «Ֆրանսիայի մեծագույն պարֆյումերներից մեկը» կոչմանն ու ունի բազմաթիվ այլ մրցանակներ: Նույն տարին նա հիմնել է իր «Maison Francis Kurkdjian» օծանելիքների խանութ-սալոնը: Վերջերս նա Ֆրանսիայից Լոնդոն է մեկնել այնտեղ իր նոր «Aqua Universalis Forte» մակնիշի բուրմունքը թողարկելու նպատակով: Լոնդոնում նրա հետ կարճ հարցազրույց է ունեցել լրագրող Շերոն Փորտերը: «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի մայիսի 14-ի համարից թարգմանաբար ներկայացնում ենք այդ հարցազրույցը:***



**- Ինչը՞ ներշնչեց ձեզ թողարկելու նոր օծանելիքը:**

- Ես Իտալիայում փորձարկում էի ինձ նվիրաբերված մի նոր տեսակի Բերգամոտի (տանձի տեսքով ցիտրուսային միրգ, որի կեղեւից ստացված յուղը օգտագործվում է օծանելիքների մեջ), երբ գործընկերս խնդրեց ինձ ստեղծել մի նոր օծանելիք՝ յուրահատուկ բուրմունքով, որպեսզի նվիրեր իր ընկերուհուն, որը սիրում էր «Aqua Universalis»-ը, բայց ավելի թունդն էր նախընտրում: Շտապում էի եւ նրան հանձնեցի իմ փորձարկման արդյունքը: Ընկերուհին շատ էր հավանել, եւ գործընկերս առաջարկեց զարգացնել այդ նոր բրենդի տեսակը: Եվ մենք ստացանք «Forte»-ն, երաժշտական նոտաների համեմատությամբ:

**- Ինչպե՞ս է նոր բրենդ ստեղծելու գործընթացը տարբերվում արդեն գոյություն ունեցածից:**

- Գլխավոր տարբերությունն այն է, որ նոր բրենդի պարագայում ինձ հուշում են, թե ում համար է (կին, տղամարդ) եւ ինչպիսին պետք է լինի (թարմացնող, ծաղիկներից որեւէ մեկի բուրմունքով եւ այլն): Իսկ ինքնուրույն աշխատելու դեպքում ամեն ինչի մասին ես պետք է մտածեմ: Պատասխանատվությունն ամբողջովին ընկած է իմ ուսերին:

**- Ուրեմն ստեղծագործաբա՞ր եք մոտենում բուրմունքներին: Ի՞նչ խորհուրդ կտայիք այն մարդկանց, ովքեր օծանելիքների հետ փորձարկումներ են ուզում կատարել:**

- Կարծում եմ՝ մարդիկ պետք է փոխեն օծանելիք գնելու իրենց մոտեցումը եւ չգնեն մի բան՝ պարզապես որովհետեւ հայտնի բրենդ է կամ ընդունված տեսակ է: Հարցը միայն այն չէ, թե ինչպես է դա դուր գալիս ձեզ: Պետք է նաեւ մտածել, թե ձեր օգտագործած օծանելիքը ինչ տպավորություն է թողնում ձեզ շրջապատող մարդկանց վրա: Ինչպե՞ս են նրանք «ընկալում» այն: Լավագույն տարբերակն է, երբ տվյալ անձն ու օծանելիքը միահյուսվում են, դառնում մեկ ամբողջություն:

**- Ո՞ւմ համար կուզենայիք ստեղծել յուրահատուկ մի օծանելիք:**

- Հավանաբար Քեյթ Միդլտոնի համար: Այս օրերին շատ են խոսում ու գրում արքայական հարսանիքի մասին, եւ թվում է, թե ամեն ինչ այնքան պարզ երեւելի է՝ նրա հագուստը, մազերը, մատանին եւ այլն: Կուզենայի, որ նրա օգտագործած օծանելիքը լիներ նրա անձնականը, միակ «մտերիմը»:

**- Իսկ ինչպիսի՞ն եք պատկերացնում այս օծանելիքը:**

- Ես Քեյթ Միդլտոնին չեմ դիտում որպես ճակատագրական դեր խաղացող մի անձնավորության: Բայց նա մի «գործընթացի» մեջ է, որը շատ բան է փոխելու հավանաբար նրա կյանքում: Նրանում ջերմ ու բնական մի բան կա, որն իմ կարծիքով շատ հետաքրքրական է: Ուստի նրա համար կընտրեի մի ջերմ ու թարմացնող բուրմունք, ինչպիսին իմ նոր «Elite Saah» միտակի օծանելիքն է: Դա գերազանց կլինի նրա համար:

**- Ի՞նչն է ձեզ մտապես ներշնչված պահում:**

- Փորձում եմ միշտ ինչքան հնարավոր է տարբեր լինել, զանազանվել: Աշխատում եմ գործակցել արտիստական մոտեցում ունեցող անձնավորությունների հետ: Ցանկանում եմ «հասնել» բոլոր նրանց, ովքեր սովորաբար անուշահոտություն չեն օգտագործում կամ չեն գնում: «Aqua Universalis Forte»-ն շուկայում կհայտնվի հունիսին:

Թարգմ. Հ. Ծ.

## Պանիր «Մոցարելա». Ավստրիայում՝ 4,4 եվրո, Հայաստանում՝ 12,5 եվրո

*1-ին էջից*

Բայց վերադառնանք պանրին: Դեռեւս ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերից էլ առաջ հայ գործարար մեկը Տավուշի մարզում անասնապահական ֆերմա հիմնեց եւ խոստացավ ներկրված շվեյցարական կովերի կաթով հանրահայտ «Մոցարելա» պանրի մատչելի գնի արտադրություն ծավալել: Հանրությունը բարի գործունեություն մաղթեց նրան ու սպասումների տրվեց: Իսկ հիմա ծանոթացեք այս պանրի գներին Հայաստանում եւ Ավստրիայում: ՀՀ-ում արտադրված 200 գրամ կշռող փաթեթը Երեւանի իր ցածր գները հիշեցնող սուպերմարկետներից մեկում գնահատված է 1315 դրամ, արտարժույթի վերածած՝ մոտ 2,5 եվրո, 1 կգ-ի պարագայում՝ 6600 դրամ կամ 12,5 եվրո: Հարեւանությամբ ցուցադրված դանիական արտադրության «Մոցարելա»-ի 1 կգ-ը գնահատված է 10400 դրամ, մոտ 20 եվրո: Իսկ հիմա ծանոթացեք նույն արտադրանքի 1 կգ-ի գներին Գրացում. այն սկսվում է 4,4 եվրոյից, Գերմանիայից ներմուծվածը վաճառվում է 6,2 եվրոյով: Թե ինչպես է ավստրիացիներին հաջողվում նման գներ սահմանելով առեւտրի հիմնական խնդիր համարվող շահույթ ապահովել, թերեւս տարօրինակ է հնչում:

Պարոնայք ՀՀ տնտեսագետներ ու իշխանավորներ, էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարությունների որակավորված մասնագետներ, հակամենաշնորհայիններ ու վիճակագիրներ, բարի եղեք ուսումնասիրել խնդիրն ու հայ հանրությանը մատչելի պատասխան տալ: Նախաձեռնելով ամերիկյան ու եվրոպական շուկաները հայ հանրությանը ներկայացնելը, բոլորովին նպատակ չենք հետապնդում դրանք այնպիսի գրավչությամբ ցուցադրել, որ հայաստանցիները տեղերում օգտվեն դրանցից: Քավ լիցի. բայց դառն իրողություն է, որ ամսեամիս են հայկական համայնքներ կազմավորվում աշխարհի բարեկեցիկ քաղաքներում, գալիս են Սիրիայից ու Իրաքից, Եգիպտոսից ու Թուրքիայից: Վերջին այս երկիրը աղաջրի մեջ պահվող պանրի եվրոպական հիմնական մատակարարն է: Այն կարծես մեծ պահանջարկ չի վայելում, ոչ այն պատճառով որ վաճառվում է 1 կգ-ը 7,5-8 եվրոյով. դրանից օգտվում են հիմնականում իրենց ազգակիցներն ու փոքր թվով այլազգիներ: Պարզապես եվրոպացիները նախապատվությունը տալիս են իրենց մոտ արտադրվածներին, չժգոհելով անգամ դրանց բարձր գներից: Այնպես որ արտահանումների օգնությամբ ՀՀ տնտեսությունը հզորացնելու ջատագովները լուրջ խնդիրներ ունեն լուծելու: Նախ հարկավոր է էապես բարձրացնել հայկական պանիրների որակը, գոնե մասամբ գրավիչ դարձնել երկիր ժամանող զբոսաշրջիկների համար: Պակաս կարեւոր չէ արտահանվելիք պանրատեսակների գինը. դժվար թե եվրոպացի պանրասերները իրենց դրամապանակները բացեն 15-20 եվրո արժեցող հայկական պանիրների համար, որպիսի գին ուրվագծվում է հայրենական որոշ գործարարների ելույթներում: Կարեւորագույն հարցերից է նաեւ Եվրոպայում ամրագրված չափորոշիչների ապահովումը, երբ պահանջվում է օգտագործված հումքի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվության տրամադրում: Թե ինչից է մինչ այսօր պատրաստվում հայաստանյան կաթնամթերքի հիմնական մասը, մենք արդեն գիտենք:

Հարցեր, հարցեր, որոնք նախ լուծումներ են պահանջում տեղում, երբ իրողությունը ցավալիորեն հեռու է հայաստանյան հանրության ակնկալիքներից: Փոխարենը լսում ենք քաղաքակիրթ առեւտրի մասին հավաստիացումներ, հաճախորդների հավասարության խոստումներ, որպիսիք տարօրինակ համարելը մեր առեւտրային ցանցի գործունեության համար մեղմ գնահատական կարելի է որակել:

### ՀԱՄԱՌՈՏ

## «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում» միջազգային համաժողովը մեկնարկեց

**Այսօր «Մեսրոպոլ» հյուրանոցում եռօրյա իր աշխատանքներն է սկսում ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում» խորագիրը կրող միջազգային համաժողովը: Այն կբացվի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ողջույնի եւ բացման խոսքով: Համաժողովին իրենց ուղերձներն են հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւան:**

**Համաժողովին մասնակցում են 12 երկրներից ժամանած պետական մարմինների ղեկավարներ ու ներկայացուցիչներ՝ Ավստրիայից, Արգենտինայից, Իտալիայից, Հնդկաստանից, Լեհաստանից, Ֆրանսիայից, Չինաստանից, Ռումինիայից եւ Լիբանանից: Համաժողովի նպատակն է քննարկել պետություն-սփյուռք հարաբերությունների զարգացման ուղիները, սփյուռք ունեցող երկրների միջեւ համագործակցության հարցերը, ազգային սփյուռքների ուղղակի համագործակցության խնդիրները, համապատասխան միջազգային փաստաթղթի ստեղծման հարցերը: Համաժողովի ընթացքում կհնչեն երկու տասնյակ զեկուցումներ, կլինեն քննարկումներ, իսկ ավարտին կընդունվի հետագա նախաձեռնությունների եւ իրականացվելիք աշխատանքների հայտարարությունը:**

Ս. Ս.

## Փոսանջյաններին աջակցող հայտարարություն

**Երեկ հայտարարությամբ են հանդես եկել Ալեք Ենիգոմշյանը, Ժիրայր Սեֆիլյանը, Տիգրան Խզմալյանը. «Ս. թ. մայիս 11-ից կասկածելի մեղադրանքով ձերբակալված Տիգրան Փոսանջյանը հայտարարել է հացադուլ: Մեզ համար ակնհայտ է, որ նրա բանտարկության իրական պատճառը բացարձակ քաղաքական է, այն է՝ ճնշում բանեցնել նրա քրոջ՝ հայտնի իրավապաշտպան եւ ընդդիմադիր գործիչ, պատգամավոր Զարուհի Փոսանջյանի վրա», գրել են հայտարարության հեղինակները՝ իրենց աջակցությունը հայտնելով Զ. Փոսանջյանին, միաժամանակ կոչ անելով Տ. Փոսանջյանին՝ դադարեցնելու հացադուլը, քանի որ այդպիսի ծայրահեղ քայլի չպետք է դիմել մյուս միջոցները չսպառելուց առաջ:**

Ս. Խ.

## Վերանայվել են «Երեւան ջուր» ընկերության սակագները

**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ մայիսի 25-ին կայացած նիստում քննարկվել է «Երեւան ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին հարցը:**

**Քննարկելով վերը նշված հարցը՝ հանձնաժողովը սահմանել է՝ սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման սակագները, որոնց գումարային մեծությունը կազմում է 174,065 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն)՝ սպառողների կողմից ներկայումս վճարվող 181 դրամ/խմ-ի փոխարեն:**

**Ընդունված որոշումն ուժի մեջ կմտնի 2011 թվականի հուլիսի 8-ից:**

**Որոշման մանրամասներին կարելի է ծանոթանալ հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ www.psrc.am:**

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով*

## Հրավիրում ենք սովորելու

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի նորաբաց «ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» բաժնում:

**Դիմումներն ընդունվում են մինչեւ ս.թ. հունիսի 1-ը:**
**Տեղեկությունների համար զանգահարել**
**517-817 հեռախոսահամարով:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԳԴ-ԱՊԶԲ-3

Պատվիրատուն՝ ՀՀ դատախազությունը, որը գտնվում է ք.Երեւան, Վ.Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ դատախազության կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ դատախազության կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, 21 սենյակ հասցեով, մինչև ս/թ հունիսի 2-ը ժամը 16:00-ն, այն պետք է կազմված լինի հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք.Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***Հայաստանի Հանրապետության դատախազություն***

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Տաթեւի Անապաս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Տաթեւ եւ Տանձատափ համայնքների վարչական տարածքներում, Որոտան գետի աջափնյա Քարահունջ եւ Աղանձու վտակների վրա կառուցվող «Անապաս-1» ՓՀԷԿ-ի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հունիսի 1-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 25.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: